



Հ. ՄԵՅԻԴԻ

ՎԱՐԱՐՈՒՄ

ՊԵՏՅՐԱՏ ՅԵՐԵՎԱՆ 1934

894. 362

Ա-57



Պատ. խմբ. Կ. Ս. Երևան
Տեխ. խմբ. Կ. Ս. Երևան
Սգրագրիչ՝ Գար. Հակոբյան

ԱՐՅՈՒՆՈՑ ԵՋԵՐ

Հարուստ, բախտավոր կյանքից բաժանվող գյուղի
կուլակի, ցարական և մուսավաթական սպաների,
գյուղապետի, մուլայի, առևտրականի և նման հասարակական
պարագիտների կողմից հեղափոխութան
հանդեպ չեղոքութուն պահպանելու մասին մտածելը
վողբալի միամտութուն կլինեք անշուշտ: Քյուրդիս-
տանի սարահարթերից մինչև Ավեյ լեռան ստորոտնե-
րը, Կարակոյունըլի հարթավայրերից մինչև Ղարաբա-
ղի և Ձաքաթալայի անտառները, յուրաքանչյուր հո-
ղամաս, յուրաքանչյուր քար՝ հանուն հեղափոխութան,
Աղբբեջանի աշխատավորութան տարած հերոսական
պայքարի պատմությամբ լի յե, միևնույն ժամանակ
այդ ամոռաց որերի վկան և հանդիսանում:

Յերկու աշխարհի դեմ առ դեմ դալու այդ մեծ ո-
րերի արյունոտ եջերը նույնիսկ այսօր վոչ վոքի մըտ-
քից չեն ջնջվել: Այդ որերի հսկայական վողեվորու-
թյունների հետ միաձուլված մշուշներում անհետացած
և թափված արյան մեջ խեղդամահ արված հերոսներն
Աղբբեջանի աշխատավորութան մտքից անջնջվել կըմ-
նան:

Պատմության փառավոր եջերում բրնձե գրչով
նշված այդ պայքարները մեր գրականութան մեջ
նույնպես հրապարակ յեկող և նրանց ղեղարկեստական
արտահայտութունը հանդիսացող ստեղծագործու-
թյուններով ե՛լ ալելի պետք և հարստանան:

Ընկ. Հ. Մեհդիի «Վարարում» յերկն այդ որերի
արյունա եջերից մեկն և: Արյունոտ եջեր: Վորովհետև
հեղինակի հերոս Սարխանն աշխատում և անխոնջ,
պայքարում, սակայն այդ եջերը չի կարողանում ա-

Գլավիտ 8555. հրատ. 2986.
պատվեր 847. տիրած 2000.
Պետհրատի տպարան,
Յերևան.

վարտել: Ընթերցողի աչքի առաջ թերթ առ թերթ բաց-
վող այդ եղբրում Սարխանի վերքերը, Շիրաբու վճիռ,
մտերմական արցունքներն ու Մահիրեյի հեկեկանքն-
ըր կան: Այդպես էլ պետք է լիներ: Հեղափոխություն-
ը միայն Սարխանները չեն ստեղծում: Սարխանը
հեղափոխության միակ հերոսը չէ հանդիսանում,
այլ այդ հերոսներից մեկն ու մեկը:

Սարխանի մահն իր վտրոշ աղբեղությունը թողնում
է անուշա: Նրա թողած դատարկությունը զգացվում է
խմբում: Բայց այդ դատարկությունը՝ մյուս մեծ
գոյության, մուս միլիոնների միջև կորչում-գնում է:

Ներկա գրվածքը վրացական մենչեփիկների և
նախկին Վրաստանի սահմաններին մոտիկ Ալքրբեյջանի
գյուղերում տեղի ունեցած հակահեղափոխական ուժերի
դեմ կռվող մի պատերազմական խմբի կյանքի նկարա
գրությունն է: Գրքում ընթերցողին վոգեւորող բնա-
կան և կենդանի տեսարաններ շատ կան:

Սակայն, չգիտես թե ինչու, այս գրվածքում,
ապստամբություն բարձրացնող բանվոր և գյուղացի
մասսաներն առաջին հերթին աշխատում են բանալ
գրավել: Բաղաբի կայազորը, փոստ-հեռագրատունը,
պետական դանձարանն ու կենսամթերքի պահեստները
թողած՝ հեղինակի՝ դեպի բանտ գիմելը ձեռն չե ան-
չուշտ: Սրա վրա ավելացնենք նաև այն, վոր ըստ յեր-
կի, բանտում գտնված կայանավորները հեղաշրջում
կատարողների գալու մասին անտեղյակ լինելով՝ նրանց
հետապնդած նպատակների հետ ծանոթ չեն: Պարտի-
զանների մի քանի զոհ տալով այրվող և կրակի բռնը-
ված կամուրջից մյուս ամին անցնելն ու վերադառնալն
անհրաժեշտ չափով լուսարանված չէ:

Կռվի ընթացքում պարտիզանների ցույց տված
վերին աստիճանի անկարգապահությունը նրանց ձեռք
բերած հաշողություններին չի համապատասխանում:
Ճիշտ է, պարտիզանական խմբերում առանձին-առան-
ձին անկարգություններ կարող են պատահել, առան-
ձին-առանձին պարտիզաններ անարխիա կարող են

ստեղծել, բայց յերբ նման դրությունները սխտեմա-
տիկ են դառնում, այն ժամանակ այդ խմբի պայքա-
րի ուժը կնվազի անտարակույս:

Իսկ Սարխանին, վորպես մի արտակարգ անձնա-
վորություն դրսեվորելը, նույնպես հեղինակի թերու-
թյուններից միինն է: «Հեղինակը յերբեք չպետք է չա-
փից դուրս սքանչանա իր հերոսով», ստում է Ենդեկը:
Իժախտաբար մենք այստեղ պետք է նշենք, վոր հե-
ղինակն իր հերոսով շատ է սքանչացել:

Սարխանի քաղաքում յեղած ժամանակ Գրինֆելդը
վյուղացի գերմանացի Բեթսուլըը հանգստացող պար-
տիզաններին հյուրասիրում է: Չնայած, վոր պարտի-
զանները վերին աստիճանի կասկածում են (տան տեղը
վերին աստիճանի ժլատ է), բայց բոլորն էլ խմում են
ու հարբում: Հարմար առիթից ողուտ քաղելով՝ Բեթ
սուլըը հրացանները թաղցնում է: Ի վերջո՝ Սարխանը
գալիս է, և զենքերը գողանալ տված, հարբած պարտի-
զաններին հանդիմանելով, առանց վոշ մեկի ողնու-
թյան՝ բռնում է Բեթսուլին, հրացանները յեա-
խյում, նույնիսկ զնդակահարում նրան: Անտարա-
կույս ճշմարտությանը չի համապատասխանում այս
դեպքը, վորովհետև, ըստ հեղինակի նկարագրության,
հյուրասիրությունը տեղի յե ունեցել համաձայն հա-
կահեղափոխականների նախորդ պատրաստած պը-
լանների: Սարխանի բոլորովին մենակ մարդ ձեռքակա-
րելու, հրացանները յետ խլելու պահին, մինչև անգամ
տանտիրոջը զնդակահարելու բուպեյին, նրա դեմ վոշ
վոք դուրս չի գալիս:

Գրքում այս կարգի մի շարք թերություններ կան:

Ընկեր Մեհդիի «Վարարում» ստեղծագործական
աշխատությունը հեղինակի մի շարք այսպիսի թերու-
թյունները ցուցաբերելով մեկտեղ՝ նրա հիմնական
նախաձեռնները նույնպես հայտաբերում է:

Գրվածքում Սարխանի մանկության հիշողություն-
ներն ավելի քան բնական և խորթմաստ են: Կուլակի
տղա և մուսափաթական սպա Շամսին հեղափոխություն-

նը խեղդելու, աղայութունը կրկին անգամ ձեռք բերելու համար գալիս է դյուղ: Նույնիսկ մանկության տարիներին Սարխանի հետ կուլում եր նա, Սարխանի շինած տնակը քանդում, բույնը ավերում: Այստեղ հեղինակը չափազանց հաջող անողգիայով ցույց է տալիս, վոր այդ թշնամութունը վաղվանից եր սկսել:

Մեհդիի մոտ բնության գեղեցիկ նկարագրութունները սակավ են: Մեր գրողներից վոմանք ընդհանրապես բնության նկարագրութուններին չափից ավելի յեն տեղ տալիս, իսկ մարդիկ և դեպքերը՝ բնությունից դուրս՝ անորոշ գույներով և ձևերով են հանդես գալիս: Պարզ է, վոր ավյալ նկարագրութունները յերկի բովանդակության և կատարված դեպքերին կապակցված և համեմատական պետք է լինեն: Մենչեվիկներին կողմից դյուղի գրավման լուրը՝ Սարխանին հասած միջոցին, Մեհդիի տված բնության նկարագրութունը խիստ հաջող է: «Հեռվից, Կուր գետի վրայով դեպի հարավ յեկող ամպը մինչև Ալեյ լեռան գագաթնիջել՝ արևի դիմաց սեվաթույր մի վարադույր է քաշել: Յերկնքի յերեսը սև ամպերով ծածկվում էր, լեռան դիմի միակ ծառը կորչում աչքից անհայտ»: Այս պատկերացումը խորը մտքերով տարված Սարխանի ամբողջ հողեփիճակն է արտահայտում:

Հեղինակը՝ մանրամասնառ և միևնույն ժամանակ քարտուղարի պաշտոն վարող մուսավաթական Աղայերդու տիպով՝ մուսավաթական կուսակցութունը խիստ լավ է ներկայացրել:

Հատկապես զբքի վերջին եջերը հետաքրքիր են և գեղարվեստական: Մահիրեյի ու Սարխանի ունեցած տեսակցութունը, Շամսիի խորհրդածութունները և «Յերկու Մահ» եջերը հաջողությամբ են տրված:

Մի քանի թերութուններ գրվածքը միջին թուլացնում են թեև, սակայն ընկեր Մեհդիի «Վարարում» խորագրով դեռ չափարած վեպը թե իր ստեղծագործության ճամբին, և թե մեր, խորհրդային գրականության մեջ մի նվաճում կարող ենք համարել:

ՔԱՂԱՔՈՒՄ ԱՊՍԱՍՐՈՒԹՅՈՒՆ

Մի ձիավոր եր գալիս դեպի քաղաք: Քաղաքի բնակիչները խումբ-խումբ փոքրիկ ապի կամրջից անցնելով՝ մի փոքր հեռու, գրեթե դետափին հոսող սառն աղբյուրից ջուր խմելու և հովասուն ծառերի տակ յերկարելով հանգիստ շունչ քաշելու եյին գնում:

Ձիավորն ակամա և հազիվ աչքերի ծայրով քաղաքի բնակիչներին նայելով, քրտնած և նիհար ձին խթանում եր յերբեմն, ապա հանդարտ առաջանում: Նա ամեն որ այստեղ յեկող և մեկնող սովորական ձիավորների նման քաղաքի բնակիչներին վրա առանձին աղդեցութուն չեր թողնում: Նրանց կողքովն անցնելիս—մի անգամ գոնե նրա յերեսին նայող չեր ճարվում: Բայց այս մարդը վշտահար, անհույս եր յերեւում: Յեվ կարծես՝ իր ուր և ի՛նչ գործով ճամբորդելը ինքն ել չգիտեր:

Որը հինգչաքթի յեր: Հաջորդ ուր քաղաքից դեպի կայարանը ձգված խճուղու շուրջը մի մեծ տոնավաճառ եր լինելու: 30—40 վերստ տարածութուն կտրող չքավոր դյուղացին իր կարիքներն հոգալու համար մեծ դժվարությամբ հավաքած բերքը քաղաք յերեկով սոված գայլի ախորժակով մանրամասնառն-

բին պեղե ե տար եծան գնով, փոխարենը թեյ, շաքար, չիթ և այլ ապրանք պիտի գներ, ապա դյուղ վերադառնար:

Վաղվա տոնավաճառի համար իրիկնապահին յեկողները՝ քաղաքի մոտից խշշաջով անցնող գետի վրա ձգված յերկաթյա կամուրջի աջ և ձախ կողմերը ցրվելով, բոշաների կարավանի նման հանգստանում էին:

Ձիավորը տոնավաճառը յեկող անձի չեր նմանում:

Յերբ կամրջին մոտեցավ՝ հեռվից կանչեցին նրան.

— Սարխա՛ն... Սարխա՛ն...

Ձիավորն ամբողջապես շրջելով՝ կանչող մարդուն նայեց: Գյուղացին շտապ քայլերով մոտեցավ:

— Ի՞նչ լուր, — ասաց աչքերն արագ-արագ կկոցելով:

Ձիավորը սկզբում չլսեց: Ուղիղն ասած, նրա մտքերը ցրվ էին: Փոքրիկ լուսթյունից հետո միայն պատասխան տվեց.

— Ինչի՞ մասին:

Գյուղացին հայացքը գետնին հառեց և առաջին անգամվա դողուն ձայնով՝

— Հաչըմին սպանեցին, — ասաց:

— Յես յերեկ իմացա... շատ մեծ կորուստ ե...

Վշտածոր շրթներից բաց թողած պատասխանը թե՛ խիստ եր, թե՛ վրեժխնդրությամբ լի:

Վերջին ամիսների ընթացքում, ապստամբների աչքը վախեցնելու և տեղական իշխանության ուժը ժողովրդին ցույց տալու համար, սպանվող մարդկանց թիվը զգալիորեն աճեց եր, անցել ամեն հաշիվ և սահման: Կենտրոնից վերջերս ուղարկված նահանգապետի առաջին զբաղմունքն այդ եր:

Այս վերջին կորուստը՝ Սարխանը սարսափով հիշեց, — դեռ նոր իբրև կազմակերպված ուժ յերևան յեկած այդ անկանոն խմբերի գլուխն անցած, իր անձը զոհարեբելուց չվախեցող այս կտրիճ հրամանատարներից մեկի անտամանակ կորուստը՝ մեծ զոհ եր անշուշտ:

Սակայն բարձրացող հեղափոխության ալիքներին ընդառաջելու համար՝ ձգված այս դառիվեր և փշոտ սահմանները կտրել-անցնելը, վորպես անսասան ուժ դեպի նորանոր հաղթանակներ ընթանալը — Սարխանին մեծ լավատեսությամբ վարակեցին և գալիք հաղթանակների հավատքովը լցրին:

— Սպանեցին նրան, բայց հեղափոխությունը չի՛ մեռել, — ասելով Սարխանը մտածեց մի փոքր, հետո հաստատ և կարուկ ավելացրեց.

— Չի՛ մեռել, չի՛ յել մեռնելու...

Շուրջը տիրող մի վայրկենական լուսթյան ծոցում հանկարծ տխրելով՝ աչքերից դեպի այտերը հոսող թաց արցունքը ձեռներով արբեց և շարունակեց խոսքը.

— Յես իսկույն Մուխթարի մոտ կգնամ:

Դուք մարդկանց լուր տվեք, կես գիշերին կգաք, հա...հա...յերբ բոլորը քնած են... յեթե վոչ ամեն ինչ տակն ու վրա յե լինելու...

Ձին մտրակեց: Հազիվ հեռացել եր մի քիչ, յերբ շրջվեց և իր համագյուղացիներին ձայն տվեց.

— Եիրալի՛, ամենից առաջ ինքդ կգաս...

Եիրալին Սարխանից բաժանվելով՝ գետից հեռու, ցանկապատված այգու մոտերը, քանդված չորս անիվավոր մի սայլի մոտեցավ: Պառկեց սայլի շվաքում: Իր ընկերն ել պառկել՝ քնել եր: Նրա դեմքը քրտինքը պատել եր պտուղ-պտուղ: Բերանը բաց եր: Մըջլուռնե-րը նրա շրթների շուրջը վըզ-վըզ ման եյին գալիս:

Եիրալին նախ ընկերոջը, հետո յեւ հարե-վան սայլի տակը յերկարած գյուղացիներին նայեց: Բոլորն ել վատ որի եյին: Բոլորի մարմ-նից ել հոգնածուկյուն եր ծորում: Բոլորն ել զով ոգի, սառը ջրի և խորը հանգստի կարիք ունեյին: Եիրալին նրանցից չեր բաժանվում: Իսկ յեթե բաժանվելու լիներ, նա յեւ, մի քանի բոպե սրանից առաջ քաղաքի իրենց ծանոթնե-րին գառը տանելով հյուր գնացող գյուղացի-ների նման, այստեղ յերկարած մարդկանց հեզնական մի հայացք նետելով կբաժանվեր, և նրանց նման չոր տեղեր չպառկելով՝ զով պա-տըչգամբներ ունեցող բարձրանիստ սներին հյուր կգնար:

Յեղանակը տաք եր, անգամ ծառի տերևը

չեր շարժվում: Եիրալին չեր կարողանում քնել: Տեղիցը վեր կացավ, ուղիղ դեպի գետը գնաց: Հող ու փոշով ծածկված հնամաշ շորերը հա-նեց և ինքն իրեն հանձնեց ջրին: Քիչ հետո գյուղացիներն ել հետևելով Եիրալու որինա-կին, մեկ-մեկ գետը մտան և իրենց մարմինը զովացրին:

Լողանալուց հետո, դուրս գալով ափը, առանց շորերի, մերկ, նստեցին ավազի վրա ծալապատիկ և զրույցի կծիկը բաց արին:

Մի ծերուկ, առանց յերիտասարդներից քաշվելու, կատակում եր, յերբեմն, նույնիսկ անպատշաճ խոսքեր դուրս շարտելով, չըջա-պատին ծիծաղեցնում:

Յերբ Եիրալին ջրից դուրս գալով մոտ գնաց՝ ծերունին ասաց.

— Մեկ ել տեսար նահանգապետն ենպի-սի մի թակարդ լարեց, վոր ամեն ինչ տակն ու վրա յեղավ:

Եիրալին նրա խոսքը կտրեց.

— Ա՛յ քեռի, եղ որերն անցան, նրա գոր-ծերը մենք ենպես խառնել ենք չիմի, վոր աստվածն ել յեթե յերկնքից իջնի, չի կա-րող դգել...

Ծերունին Եիրալու մտքերը չեր ցանկա-նում բաժանել:

— Ա՛յ բաջողլի, դրան նահանգապետ կա-սեն: Քո ասածներից չի. հազար տեսակ փոր-ձանքից պրծացրել ե իրա յախան:

Գյուղացիներին մինն էլ խոսակցութեանը խառնվեց.

— Այ՛ մարդ, ի՞նչ ես կորցնում, մի անգամ պատանքը վզին անցկացրու, աստիածը կամ քեզ կտա, կամ՝ նրան: Ել ինչի՞ց ես վախենում...

— Ինչի՞ցը պիտի վախենամ: Վոչ մի բանից էլ վախ չունեմ: Տուես քամուն տվի, դարձա անբախտ, տասը տարի Միբիբ, չորս տարի յեւ տաժանակիր աշխատանք եմ քաշել, ել ինչե՞ր ասես չեն յեկել գլխիս...

Շիրալին գգում էր, վոր ծերունի քեռին շատ է հուսահատվել. նա մտածում էր, — «⁷⁷ ինչև հիմա նման դեպքեր շատ են պատահել, բայց առանց հետևանքի յեն մնացել: Սրանից վեց ամիս առաջ, յերբ այստեղ էր նախ կին նահանգապետը՝ ի՞նչ բաղխումներ ասես տեղի չունեցան, յերկու շաբաթից ավելի չկրուվեց ի՞նք միթե մենք: Ի՞նչ շահ տեսանք: Ինչո՞ւ պարտվեցինք. վորովհետև մենք չգիտեցինք թե ինչո՞ւ համար եյին այդ կռիվները, վորովհետև նահանգապետին, նաչախիկին տապալելուց հետո չգիտեցինք նաև, թե ինչ հող ենք տալու մեր գլխին: Շաբաթներով կռվիր, փոսկի ընկերներինդ դո՛ս տուր, ունեցած չունեցածդ ծախիր, քաղաք ուղարկիր, փամփուշտ, վառոդ գնիր, հետո յեւ պարտվիր, ձեռքդ մի բան չմնա: Սրանից էլ վատ բա՞ն»:

— Քեռի՛, Մուխթար ամին խիստ փորձառու մարդ է, նա մեզ ճամբեն ցույց կտա, ինձ

թվում է, վոր խաղը տանուլ չենք տա այլևս: Իմ սիրտն զգում է, Սարխանին էլ ասի. աստված տա միայն վողջ մնանք: Բազվում նույնպես խառնվել է ամեն ինչ: Չե՞ս լսել: Վա՛լլահ՝ մահը կա, վերադարձը չկա: Թող Շիրալին իր թշնամու հետ կռվի բռնված պահին արյունով թաթախվի...

Ծերունին մերկ կուրծքը քերելով՝ քրոջ վորդուն էր նայում: Նրա խորն ընկած աչքերի մեջ հույսի կայծեր եյին առկայծում ասես հիմա: Նա իր քրոջ վորդու սրտից բղխող այդ խոսքերին հավատում էր: Միայն չգիտես թե ի՞նչպես, գյուղացիական վերջին ապստամբությունից հետո մտքում ծագած անհուսութեան դիմաց պարտվում էր:

Խեղճ ծերունին վաթսուներամյա հասակում մի լավ որ չէր տեսել:

— Ի՞նչ կլիներ, յեթե մենք էլ մի լավ որ տեսած լինեցինք: Միայն աստծուն հավատացողը լավ որ է տեսել: Աստծուն հավատացողը լավ է, վորդի... — ավելացրեց խիստ տոնով:

Շիրալին չորերը հազնելիս քեռուն էր նայում և նրա թախծալի դեմքի ամբողջ վիշտը կարդում կարծես:

— Հաշմի սպանությունը մեր մեջքը կոտրեց: Մեզ նման հարյուր մարդու հավասար էր: Իր դործին տեղյակ, գյուղացու դարտ ու ցավից հասկացող մարդ էր, — ասելով հանկարծ աչքերից հոսող արցունքը սրբեց ձեռներով, ու նորից հեծկլտաց:

Նա լալիս եր: Լալիս եր խորը վշտով: Առաջ ել եր լացել: Սակայն ի՞նչ ոգուտ լալուց: Յեթե յալ ընկերներ ճարեր այն ժամանակ, ապստամբություն կբարձրացներ և Հաշմի նման կտրիճ ընկերոջը կազատեր մահից: Նա այս փառավոր գործը չէր կարողացել գլուխ բերել: Չեղա՛վ... վատ ժամի հանդիպեց: Քաղաքը գալու պահին եր միայն Հաշմին տանելու և սպանելու լուրն առել: Իսկ ի՞նչ կարող եր անել այդ բոպեյին: Յեթե ձայն հանելու լիներ՝ իրեն, գուցե և մյուս ընկերներին ել զոհ տար: Զոհեր տալուց ծանր բան կա՞ հիմա: Ներկա որերում զոհ տալը, թեկուզ մի մարդ, գործին մեծ հարված հասցնել չի՞ նշանակում: Եիրալին խորհում եր սրանց մասին, դրա համար ել չէր խոսում:

Հիմա նա լալիս եր: Լալիս եր իր ջեռու, բարեկամների և այդ քաջ յերիտասարդին ճանաչող հարևանների ներկայությամբ վորպես փոքրիկ մի մանուկ:

— Վնաս չունի, ջեռի՛: Սարխանի ասած խոսքերը մի՛ մոռանա: Հեղափոխությունը չի՛ մեռել. հեղափոխությունը չի՛ մեռնելու...

Գավառի կենտրոնում, յերկար ու փայլուն սրի նման կտրող-անցնող առալի ցածի կողմից, մենավոր տանից աղոտ լույս եր առկայծում: Տան բակում՝ խոշոր թթենուց գորշ մի շուն եր կապված: Տան դուռը թե ներսից

և թե դրսից փակված եր: Ներսում—յերեք մարդ կար միայն: Նրանցից մեկը չեչոտ յերեսներով, կարճահասակ մի տղա յեր: Տղան մեջքին կապած մաուզերը ծնկների վրա բերել, արմունկը սեղանին եր հենել: Յերկրորդը մարմնեղ, սև մորուքով մի մարդ եր, աչքերը չեչոտ տղային հառած՝ անչարժ կանգնել եր: Նրա հայացքում տաժանք և սարսափով լի հոգնություն կար:

Յերրորդը՝ Սարխանն եր:

— Այս գործին դու հարմար ես. գյուղացու լեզուն դիտես,— ասաց մորուքավորը և Սարխանին դիմելով շարունակեց խոսքը:


— Հազի՛վ թե, Մուխթար ամի, բայց յեթե աղյուսի գործարանի բանվորները չզան, մեր ուժը չի բավականացնի,— ասելով նրա խոսքը կտրեց Սարխանը:

— Յես ենտեղ եյի այսոր: Քաղաքի պրիտավի լրտեսն ինձ տեսավ, չճանաչեց. շորերս, վրա-գլուխս փոխել եյի, սակայն մի փոքր կիսակածեց:

Մուխթար ամին լուծյան գիրկն ընկավ: Իուրը մի բան նկատելով ցնցվեց հանկարծ: Հետո զգալով, վոր մի ուրվական մոտեցավ դուան, ձեռքը բերնին տարավ—«սրա... սրա...», շնչաց ու սեղանի լամպը մարեց:

Գիչերվա ժամի յերկուս և կեսը կլինեք: Իրսից ձայն— ձուն չէր լսվում:


Մուխթար ամին չեչոտ տղայի ու Սարխա-



նի թեկից բռնած՝ յերկուսին ել լուսամուտից
և գոնից դեն՝ հետու մի անկյուն քշեց:

Սովորական որ եր այդ որը: Այդ տան յե-
տեի այդին գրեթե ամեն զիշեր նահանգա-
պետի և նաչայնիկի լրտեսներով լիքն եր լի-
նում: Մուխթար ամու յուրաքանչյուր շաբ-
աթումը հետապնդվում եր: Այսոր նույն դեպքը
կրկնվում եր դարձյալ: Բայց յեթե այս տունը
քսան մարդ ել զալու լիներ, հետապնդողները
վոչ վորի չեյին կարող ձեռք գցել, վորովհետև
տունը դեպի նկուղ տանող զաղանի ճամբա
ուներ: Յերբ կասկածելի վորևե անձնավորու-
թյուն եր նկատվում տան շուրջը, Մուխթար
ամին մեծ թախտի ներքևի գոնակը բանալով՝
ներկա յեզողներին մեկ առ մեկ բաց եր թող-
նում, ապա թախտի վրա մեծ գորգ փռելով՝
գրսի դուռը բաց եր անում: Նկուղից դեպի
դուրս բացվող դուռը փակ եր լինում շարու-
նակ: Այն պահին, յերբ վողջ քաղաքը քնած
եր, Մուխթար ամին շատ վաղ վեր եր կենում,
նկուղի դուռը բաց եր անում և ընկերներին
ճամբա յեր դնում: Այս մարդիկ սովորական
բանտարկյալի կյանքի եյին վարում: Այս
«բանտար» նրանք իրենց ձեռներով եյին հիմնել,
և մի որ ել իրենց սեփական ձեռներով կոր-
ծանելու եյին:

Չգիտես ինչու, այդ որը Մուխթար ամին
նկուղի դուռը չբացեց, վորովհետև նա հիշյալ
դուռը բանալու և փակելու նեղությունը չու-
ղեց հանձն առնել այս անգամ:



Այս գրության մեջ՝ տան դուռը թակե-
ցին: Մուխթար ամին զգուշությամբ Մարխա-
նի և չեչոտ տղայի ականջին մի քանի խոսք
չնշաց, վորից հետո ավելացրեց.

— Յես ուզիլ գործարան կգնամ. մեր զեն-
քերն առլի ախին՝ բոստանի պահակի մոտ են:
Մարխա՛ն, դու գյուղացիներին բեր, յես ել՝
բանվորներին...

Մրանից հետո Մուխթար ամին չեչոտ
տղայի միջոցով մյուս ընկերներին ել կարգա-
դրեց լուր տալ անպայման:

Մարխանը դուան, ձախ, իսկ չեչոտ տղան
աջ կողմը կանգնեցին. Մուխթար ամին ձեռքը
դեպի դուռը տարավ: Հանկարծ հիշեց, վոր
դուռը զրսից փակ ե: Յետ դառնալով, տանից
նկուղ տանող գոնակը բացեց: Իսկույն դուրս
ցատկեցին:

Մուխթար ամին կռնակը տան գրսի պա-
տին տվեց: Կարգադրեց, վոր իր յերկու ընկեր-
ներն այդտեղ սպասեն: Ինքն զգուշությամբ,
հազիվ մատի ծայրերի վրայով դուան մոտիկ-
ցավ: Թանձր մութ եր. այդ մթության մեջ
դժվար եր նշմարել իրար: Մի քիչ ել մոտե-
ցավ դուան: Ի՞նչ տեսավ: Անձանութ մի անձ-
նավորություն ականջը դուան փակցրած՝ լըր-
տեսում եր: Մուխթար ամին յես դարձավ իս-
կույն, Մարխանին և չեչոտ տղային կանչեց:

... Մի քանի րոպե հազիվ եր անցել, յերբ
ուժեղ մի հարվածի ձայնը լավեց: Դուանն ա-
կանջ փակցրած զրտեսը գլխին իջած հարվա-

ծից շուռ յեկամ և փռվեց դետին: Մուխթար
ամին նրա թնկց բունց և դեպի տան յետևել
կողմը քաշեց. նրա ատրճանակն ու տաճկա-
կան յուղած հրացանը վերցրեց, վորից հետո
պարտեզի խորքը տանելով՝ ժեռոտ դառնվա-
րից դեպի մոտակա անդուեղը նետեց նրան:
Հրտեսի մարմինն աղմուկով, թափալդըրով
ընկավ: Հեռվից՝ դետի կողմից մի շառաչյո՛ւն
լսվեց:

Բակում կապված շուռը տարորինակ կեր-
պով լուռ եր, կարծես նա յեղ եր դդում, վոր
դետ նետվողը մի լրտես եր:

— Ո՞ւր եր բանտապետը, — հարցնելով
Մուխթար ամին բանտի պահակի վրա բղա-
վեց, — իսկույն այստեղ կանչի՛ր նրան:

— Գիշերվա կեսին յես նրան վորտեղե՞ց
ճարեմ:

— Գետնի տակի՛ց...

Սկզբում հրացանը դիմացինին ուղղել ու-
զեց պահակը. բայց յերբ նկատեց, վոր Մուխ-
թար ամու յետևը զինված մի խումբ կա կանդ-
նած, մտադրությունը փոխեց:

— Ուրեմն չե՞ս կանչելու, — ասելով դար-
ձյալ ասքերը պահակին հատեց:

Ձեչոտ տղան՝

— Հարձակո՛ւմ, — գոռաց:

Մարխանի խումբն աղմուկով դարպասի

վրա հարձակվեց: Դարպասի վրա հարվածներ
տեղալով... ձայն տվեց:

Իսկ Մուխթար ամին բղավելով ասաց.

— Սպասե՛ք, անկարգություններ չա-
նե՛լ...

Ձեչոտ տղան դարմանքով նրա յերեսին
նայեց. այս խոսքերի իմաստը վոչ մի կերպ
չկարողացավ հասկանալ նա:

Մուխթար ամին մի անգամ ել գոռաց.

— Դուռը մի՛ ջարդեք, ասում եմ ձեզ:

Գյուղացիները նրա գոռ ձայնից վախե-
ցած՝ տրված հրամանին հնազանդեցին և յես
դարձան: Բանվորական վաշտը դեռևս ան-
չարժ կանգնել — հրամանի յեր սպասում:

— Լսեցե՛ք: Դուները ջարդելու պետք չկա:
Թող իրենց ձեռներով բանան: Այս շինությու-
նը մեզ ել պետք կգա: Հասկացա՞ք:

Ձեչոտ տղան Մուխթար ամու խոսքերից
գոհ մնաց: Սարխանն իր ձեռքի կոտրած լապ-
տերը վեր բարձրացրեց: Այժմ բոլորն ել ի-
րենց հայացքը պահակ կանգնած յկարճահա-
սակ, ծուռ աչքերով, լեղզիական չուխա հա-
գած և մեջքին դաշույն կապած տղային դարձ-
բին: Նրա դեմքի դեղնագույն մազերը բիզբիզ
կանգնել եյին:

Մուխթար ամին տեսավ, վոր պահակն
այնքան ել հաշվի չի առնում իրենց, մեծ-մեծ
ե խոսում, խեթ-խեթ ե նայում և բանտի իրենց
հանձնեցու տրամադրությունն չունի նույնպես:
Գլխի թեթև ակնարկով՝

— Իսկույն գնա՛ և բանալիները բեր, յեթե վոչ, ամենից առաջ քեզ կսպանենք, — ասաց:

Չեչոտ տղան մոտեցավ պահակին և աջ ձեռքով բռնեց նրա մատուղները:

— Չե՞ս լսում միթե, ո՞ւր է բանտապետը:

Պահակը չե՛ր ցանկանում լսել: Բանտապետի բնակարանի տեղը հրաժարվում էր ցույց տալ: Մուխթար ամին ատրճանակի բլթակը փորձեց քաշել:

— Շտապի՛ր, ժամանակն անցնում է, — դայրացած տոնով զոռաց:

Պահակը սմքել-մնացել էր, վախից նրա լեզուն չե՛ր դառնում: Նախ չեչոտ տղային, հետո Մուխթար ամուն, իսկ ամենից վերջը՝ հրացանը դեպի իր կոկորդն ուղղող Սարխանին նայեց նա, — բոլորն էլ պահանջկոտ էյին, վճռական, բերաններից արյան հոտ էր գալիս:

— Իրա տա՛նն է, գնացե՛ք բերե՛ք, — պատասխանեց պահակը:

— Անցի՛ր առաջ և տունը ցույց տուր մեզ:

Սարխանը՝ պահակի թևից պինդ բռնած հրամայեց.

— Սրա հրացանն ու ատրճանակը վերցնե՛լ:

Շիրալին ցատկեց առաջ: Հրացանը վերցնելով՝ մի գլուղացու տվավ, իսկ ատրճանակն իրեն պահեց:

Սարխանը և Շիրալին մի քանի բանվորներին

և պահակի ուղեկցությամբ բանտից 30—40 վոտք հեռավորության վրա տեղավորված բանտապետի տունը մտան: Լույսերը չէյին վառվում ներսը: Քնել էյին: Բանտապետը նույնպես քնել էր հանգիստ: Սարխանը դուռը բռունցքով թակեց:

— Վեր կացե՛ք, ձեզ կանչո՛ւմ են, — ասաց բարձրաձայն դռան արանքից պահակը:

Ներկա յեղոզներից մինը պահակի աջ, մյուսը՝ ձախ, իսկ մյուսները շուսամուտների ներքևն էյին սպասում:

Աղմուկով դուռը բացվեց:

— Ո՞ւմն էք ուղում:

Պահակն շտապեց պատասխանել.

— Բանտի բանալիներն են պահանջում:

— Ի՞նչ ես ասում, դժվե՞լ ես, ի՛նչ է, — ասաց շապկանց դուրս յեկած և դռան արանքից խոսող մարդը, ապա նայեց պահակին և «պոտուր թողած, այստեղ ինչո՞ւ ես յեկել», — ավելացրեց:

Մի գլուղացի ձայն տվեց.

— Ասես ինքդ ես դժվել:

— Դու դեռ զուռնից խաբար չունես, — ասելով՝ պահակն անցավ մանրամասն բացատրության, — գլուղացիները բանտի դարպասը կոտրել՝ ներս են թափվում, իսկ դու տանդ քաղցր քուն ես քաշում:

Նման ասեկոսներ լսելու ժամանակ չունեյին նրանք: Սարխանն առանց սպասելու բղավեց.

— Բանալիները բե՛ր, ինքդ ել արի, լսե-
ցե՛ր:

Բանտապետը խիստ զարմանքով նրա յե-
րեսին նայեց, նրա ու՛ր լինելը չգիտեր: Հրա-
մաններ տվող այս անձնավորութ՛յան հան-
դրգնութ՛յունը նկատելով՝ զարմացավ: Սկզբ-
բուն «գուցե նաչալնիկ կամ պատասխանատու
մարդ է» մտածեց, սակայն պահակի տված
տեղեկութ՛յունը մտաբերելով՝ ասաց.

— Կորսվեք գնացե՛ք այստեղից, չա՛ն
վորդիներ...:

Սարխանը կատաղեց:

— Մտկույն բանալիները վերցրու և, ա-
ռա՛ջ անցիր, սպասելու ժամանակ չունենք.
տղերք, դեպի տուն,— ասաց և առանց սպա-
սելու, կրճքով բանտապետին հրելով ներս մը-
տավ,— լամպը վառի՛ր շուտ, մենք քեզ ենք
սպասում,— ավելացրեց և ինքը մի լուցկի վա-
ռելով լուսամուտում դրված լամպին մոտեց-
րեց, հետո նորից,— շտապի՛ր, ո՞ւմն ես սպա-
սում,— կանչեց:

Չորս կողմից ճանապարհը փակ էր... ճա-
րահատ բանտապետը զգեստներն սկսավ հաղնել
անխոս: Նրա լեզուն կապվել էր: Սակայն յեր-
բեմն լեզվի տակով մի բան էր փնթիփնթում:
Սարխանը գեմքը թթվեցրեց, աչքերը մեծ-մեծ
բաց արավ, և.

— Լեզուդ փո՛րդ կոխել, բանալիները
վերցրո՛ւ,— ասելով գոռաց վրան:

Բանտապետը վեր կացավ, բանալիները

վերցրեց: Սարխանի առաջն ընկած՝ բանտը
յեկավ ուղիղ: Տենդով բռնված մարդու նման
նրա մարմինը զողում էր: Կատարելապես ար-
գահատելի դրութ՛յան էր մատնվել: Դեռ յերեկ
այստեղ իր ցանկացած հրամաններն արձակող
բանդապետը չլիներ կարծես:

— Ախր ի՞նչ եք ուզում դուք,— հարցու-
մով Սարխանի տրամադրութ՛յունը շոշափել ու-
ղեց նա:

— Չոռ ու ցավդ ենք ուզում, ահագին ա-
նասուն... գոնեք բա՛ց արա... հասկացա՞ր:

Շատ լավ էլ հասկանում էր նա, բայց ինք-
նիրեն անհասկացող էր ձևացնում:

Դանդաղ քայլերով Սարխանն առաջ ան-
ցավ: Միտումի գոներն սկսեց բանալ: Կամե-
րաններում անհաշիվ մարդիկ կային: Ներս
մտնելով՝ իրեն և իր ընկերներին սիրով զիմա-
վորող մարդկանց նորանոր տեղեկութ՛յուններ
հաղորդեց և, իսկույն գենք վերցնելով՝ իր
խմբին միանալու հրավեր կարդաց նրանց:

Դրսում՝ Մուխթար ամին խմբի անդամ-
ների հետ կատակում էր բարձր և հրճվում:

Սարխանը բոլոր բանապրկայլներին ազատ
արձակելուց հետո բանտապետին կամերաներից
մեկում փակեց և արագ քայլերով Մուխթար ա-
մուն մոտեցավ:

Լույսը բացվում էր:

Խումբն աղմուկով դեպի նահանգական
վարչութ՛յունը զիմեց:

Սարխանը՝ Մուխթարի հետ միասին՝
խմբի առջևիցն էր ընթանում:

Ս Ի Ր Ա Շ Ա Ր Ն Ե Ր

Գեղեցիկ եր Մահիրեն: Բայց այն անձնա-
վորությունը, վորին կարոտով սպասում եր
նա, չեր յեկել դեռ: Ամռան արևը բարձր ծա-
ռերի արանքներից սլատառոտուն փեշերը հա-
վաքելով՝ Ավեյ լեռան կոնակն եր անցնում,
հեռանում: Մահիրեյի սպասածն ուշանում եր
կրկին: Մահիրեն կասկածելի մտքերով տար-
վեց, խորը հողոց հանեց—աչքերը հառած լեռ-
նային ոճաձև այն կածանին, վորով սեռք ե
գար նա: Գծբախտարար վոչ վոք չեր յե-
րևում: Բայց ինչո՞ւ ուշացավ: Գուցե Մահիրե-
յից նեղացել ե նա: Վո՞չ, չի կարող պատահել:
Իսկ ինչո՞ւ համար Մահիրեյից պիտի նեղա-
նար:

Մահիրեն Ավեյ լեռան ստորոտում գոռա-
ցող թնդանոթի ձայներից ցնցվեց: Թնդանոթը
մի քանի անգամ դուռաց դարձյալ:

Գյուղում լուսթյուն եր տիրում:

Ինքն ել լուռ եր:

Մահիրեն հանկարծ գլուխը դեպի աջ
չրջեց: Նրա աչքերը դիտում եյին հիմա այն
բակը, ուր սպրեկ եր նա, վորին ամեն բոպե
կարոտով սպասում եր: Այնտեղ՝ շտապ դեպի
ախոռը գնացող մի մարդ նշմարվեց: Այդ մար-

դը թամբած ձին դուրս քաշեց, դեռնից մի բան
վերցնելով՝ նրա ուսերից կախեց: Խիստ արագ
նա ինքնիրեն հավաքեց և մատների ծայրերին
բարձրանալով՝ ցատկեց ձիու վրա:

Մահիրեն իրեն կորցնելու աստիճան չիտթ-
վեց: Այդ մարդու այսքան շտապ մեկնելը և
իր տված խոստումը չկատարելը հիշելով՝
կրկին և կրկին վշտացավ: Յանկացավ դժգոհ
ձայնով կանչել նրան. չգիտես ինչո՞ւ չկարո-
ղացավ: Վո՞չ, չի կարող պատահել, այնուա-
մենայնիվ նա առանց Մահիրեյին տեսնելու չի
կարող մեկնել: Միայն թե... Գուցե, իրասե-
չեր ցանկանում դալ: Ա՛խ, նա վերադառնում
ե: Մահիրեյի հետ տեսակցելու կզա: Նա իր
խոստումը չի մոռացել: Անտարակույս՝ Մահի-
րեյից հեռու սպրեկ չի կարող նա: Անտարա-
կույս՝ նա իր սրտից, աչքերի բերերից, կյան-
քից չի հեռանա:

Մահիրեն դժվարանում եր դապել իր հուզ-
մունքը: Գեղեցիկ և յերկար վիզն յերկարելով՝

— Սարխա՛ն, Սարխա՛ն... — կանչեց:

Չայնը, գյուղի կենտրոնում, սպիտակ
քարից շինված տանը հանդիպելով՝ արձագանդ
տվեց: Մահիրեյի՞ ձայնը Սարխանը չլսեց
կարծես:

Գուցե նա դեպի իրենց տան կողմը, Մահի-
րեյին տեսնելու չեր գալիս: Ուրիշ գործի պատ-
ճառով եր առաջանում: Մահիրեն կրկին անգամ
ձայն տվեց.

— Սարխա՛ն, Սարխա՛ն — ա՛ն:

Մարխանն իր ձին ուղիղ դեպի Մահիրեն
բռնեց:

...Յերկուսի աչքերն ել գետնին եյին հա-
ռել: Յերկուսն ել վիշտ եյին պահում իրենց
հոգու ծալքերում: Յերկուսն ել իրենց դիմացը
գծադրվող մահվան և այս բոպեյին ապրած
քաղցրության մասին եյին մտածում:

Դիմացը՝ Թնդանոթներ եյին դուռում, գըն-
դացիւրներն ոգում կրակ եյին շաղ տալիս: Իսկ
այստեղ՝ լուռթյուն. խորին լուռթյան ծոցում
յերկու սրտեր եյին բարախում: Դիմացից ար-
յան հոտ եր դալիս, մահվան յերգեր եյին հըն-
չում: Այստեղ հրձվում եյին մարդիկ, ապրել
եյին ուզում:

Կամ առա՛ջ, վերջնական ազատություն
ձեռք բերելու համար դեպի մահվան խրամատ-
ները պետք եր առաջանալ, կամ Մահիրեյին,
և նրա դյուրթող հայացքին խիստ մոտիկ պետք
եր գտնվել, նրա քաղցր և գրավիչ խոսքերին
սկանջ դնել:

Մարխանը ձիուց ցած չիջավ: Չուզեց ել
իջնել, վորովհետև անքնությունից ուռած նրա
աչքերը կարմրել եյին և փոքրացել: Այդ աչ-
քերն աստիճանաբար Մահիրեյից բաժանվեցին,
չբջկեցին, և դյուրից հազիվհազ հեռացած
պարտիզանական հեծելազորին հառած մնա-
ցին:

Մարխանի սրտի խորքում տարորինակ մի
տրամություն ծնեց: Ծանր եր բաժանման բո-
պեն: Վորովհետև առաջին անգամը չեր այդ:

Յերկու տարուց ավելի մահը վտանահարելով,
կրակի, հրդեհների վրայից անցնելով և իր
լավագույն որերն անցած՝ ճանապարհին թա-
ղած՝ նա կյանքի պայքարից մի բոպե իսկ յեռ
չեր մնացել:

Նա հիմա յեւ վճռական մի յեղբակացու-
թյան չեր կարողացել հանդել: Մի խոսք ար-
տասանելու համար՝ հրացանն ուսից գողն առ-
նելով, յերկնքի խորքերում լողացող ամպերին
վշտալի սիրտը բանալ ցանկացող մարդկանց
նման՝ աչքերն անսահման դատարկությանն
հառեց: Ապա անխոս և անձայն, բայց խոսուն
իր աչքերը Մահիրեյի աչքերի մեջ սուղեց:
Հայացքներն իրար գրկեցին: Այս դավաճան
հայացքները՝ յերկուսի համար ել անբացա-
տրելի մի ուժով ճնշում եյին նրանց:

Մահիրեն բորիկ վտանները շարժելուց խու-
սափելով և իր դժգոհությունը ցույց տալու
փոխարեն՝

— Ընկերներդ մեկնեցին, դու յե՞րբ ես
դնայու,— ասաց իր առջև կանգնած մարդուն:

Մարխանը՝

— Յե՞ս,— պատասխանեց նրան,— այս
բոպեյիս կգնամ, ձիս հիանալի յե, նրանց
կհասնի:

Նա իր չորացած շրթները լեզվի ծայրով
թրջեց:

— Ախր յես...

Ուզում եր շարունակել, մի բան ել այլե-
լացնել, ամաչեց. խոսքը կիսատ թողած՝ յեռ

դարձալ, իրենց տան շուրջը նայեց, — վոչ վոք
չեր յերևում: Վախեցած Մահիրեն չորս կողմը
դարձալ և «գուցե այդ տեսակցությունը մեկը
նկատեց» մտածելով, անմեղ հանցադործի նը-
ման աչքերը մի կետի սևեռեց:

Սարխանն առանց խոսելու՝ մի վորոշ յեզ-
րակացության եր հանդեպ:

— Մահիրե, յես գնում եմ, մնաս բա-
րո՛վ, — ասաց և վտաներով ձիու կողքերը հար-
վածեց: Ձին տեղից ցատկեց... Սարխանը
Մահիրեյից հեռացալ:

Յերբ վոր հասել եր արդեն իրենից մի փոքր
առաջ մեկնող դյուղացիների հավաքատեղին,
և յերբ վոր շրջվեց, հետ նայեց, տեսալ՝ վոր իր
յետևը մնացած դյուղի սապատավոր տնակ-
ները, յերկու լեռան արանքում հոսող դետակի
նման վոլորուն, ծուռ ու մուռ ճամբաները, հատ
ու կենտ ակացիաները, քանդված պատերը, ա-
մեն, ամեն բան, սարսափից մեծացած հար-
յուրավոր աչքերի նման խորը կարոտով իրեն
են նայում: Գոմերը՝ հեռվից նշմարվող դերեզ-
մանաքարերի նման սև, տեղի ունեցած դեպ-
քերից ասես շիտթված, կանգնել էյին անկեն-
դան: Մահիրեյի մայրն իրենց տնակի դռան
հենված, ձեռները թևի տակին, խորն ընկած
աչքերով՝ դեպի կովի ճակատը ձգվող փոշոտ
ճանապարհին եր նայում:

Գյուղի ամենաբարձր բլրի գագաթին՝ վո՛չ
վոք չեր յերևում:

Մահիրեն իր կանգնած տեղից շարժվեց,
հնորյա, սև փշե ցանկապատին մոտիկացալ:
Յանկապատի կողքին անշարժ կանգնեց:

Ձիավորը հեռանում եր: Մահիրեն կարո-
տով դիտում եր նրա յերթը, և ունկնդրում
անհանգիստ զարկող իր սրտի ձայնին...

ՅՈՒՂՈՒԻ ՅԵՐԿՈՒ ՏՂԱՆԵՐԸ

Սարխանի ապրած հողաշեն տնակից շատ հետու, դեպի քաղաք յերկարող խճուղու յեզերքին, դեղին կղմինդրե տանիքով, սպիտակ քարից շինված յերկու հարկանի մի տուն կար: Գաղաքից յեկող պետական հյուրերը միշտ այս հարկի տակն եյին հյուրընկալվում: Նույնիսկ ժամանակին նահանգապետը յեքեք գիշեր այս հարկի տակն եր գիշերել: Տան տերը՝ Յուլչու անունով և սպիտակ մորուքով մի մարդ եր: Նա իր յերկու տղաներին ռազմական դպրոցում սովորելու յեր ուղարկում: Միջնակ՝ Համդան ժամանակին իրենց գյուղական դպրոցի հինգերորդ խմբակն եր վերջացրել միայն: Դրանից հետո վոչ մի տեղ չեր շարունակել իր ուսումը, մնացել եր գյուղում և վարել իրենց տնտեսությունը: Յուլչուն հիվանդանադով և իր մոտալուտ մահն զգալով՝ տղային մի քանի անհրաժեշտ խրատներ տվեց: Այդ խրատներից միինն ել, գյուղի այժմյան հեղկոմի նախագահ Սարխանին եր վերաբերում: Սարխանը շուտ-շուտ դավառի կենտրոն եր գալիս և վերադառնում: Այստեղ բավականին կասկածելի մարդկանց հետ եր շփվում նա: Յերբ գյուղացիությունը Յուլչուի դեմ աղմուկ և բողոք եր բարձրաց-

րել— Սարխանի մատն այդ գործի մեջ լինելու մասին տեղեկացրել եյին նրան: Սկզբում այդ տեղեկություններին չեր հավատացել Յուլչուն:

Նահանգապետի միջոցով բերված Չաքաթալայի վաչան Հայաստանի սահմանադրուին ուղարկելու միջոցին Սարխանը ձերբակալվեց եր: Այն ժամանակ, սկսվելիք պատերազմի դեմ, զինվորների մեջ ագիտացիա մղելու պատճառով՝ նահանգապետի կարգադրությամբ Սարխանի ձերբակալության ու տաժանակիր աշխատանքի ուղարկելու մասին խոսում եր ինքը՝ գյուղացին: Պարզվեց ուրեմն Յուլչուի համար, վոր Սարխանի շուտ-շուտ դավառում չբջելն իր վորոչ պատճառն ուներ: Համդային տված գլխավոր պատվերը՝ Սարխանին մի կերպ մեջտեղից վերացնելն եր: Յուլչուն վաղաժամ մահացավ: Մահվանից մի շաբաթ առաջ դավառի կենտրոնն եր գնացել: Բայց իրեն մոտիկ բարեկամ նահանգապետի հետ տեսակցելուց հետո, նրա տնից դուրս գալու պահին տեսավ, թե ինչպես մի խումբ չքավոր գյուղացիներ նահանգապետի գիվանատան վրա հարձակում գործեցին:

Տեղի ունեցած այս կարևոր զեպքի մասին մեր ընթերցողները հիշում են անշուշտ: Գալառի բանտը դատարկելով և բանտարկյալներին ազատ արձակելուց հետո՝ ապստամբները Մուխթար սմու, Սարխանի և չեչոտ տղայի առաջնորդությամբ նահանգապետի հիմնարկության վրա հարձակվեցին: Այս ապստամբ

գյուղացիներին և վոչ մեկին չեք ճանաչում Յուլիոն: Միայն սև մորուքավորի՝ Բազվում մի քանի տարի վորպես բանվոր աշխատելու և գյուղը վերադառնալու մասին տեղեկություններ ուներ: Մի քանի անգամ լսել էր նաև, վոր այդ անձնավորության «Մուխթար ամիր» էլին կանչում: Խմբի առաջապահ Սարխանին ել եր նկատել: Յուլիոն Սարխանին տեսնելուն պես մտառ կծեց: Ապա մտածելով, վոր գյուղում էր մնալը վտանգավոր է այլևս, մեջտեղից անհետացավ:

Խմբի առաջին շարքերում և բարձր ձայնով կանչող Մուխթար Ամիրն պահանջեց, վոր նահանգապետը դուրս գա: Սակայն դռներն ու լուսամուտները փակ էլին:

Սարխանը խմբից մի քանի մարդ գատելով՝ դիվանատան չորս կողմը պահակ կանգնեցրեց: Մուխթար Ամիրն խմբից դուրս գալով՝ դեպի զորանոցը դիմեց: Զորանոցը փողոցի մյուս կողմն եր գտնվում: Դռան մոտ հասնելիս՝ իրենց խմբի անդամներին բղավեց.

— Յեկե՛ք, այստե՛ղ յեկեք...

Ներսում վոչ վոք չկար սակայն: Զինվորներին կենտրոն տեղափոխելու պատճառով՝ զորանոցը բոլորովին դատարկ եր:

Մուխթար Ամիրն ներս մտավ, խմբակիցները հետևեցին նրան: Ճանապարհի յեղերքով մարդատար մի ավտոմոբիլ եր մոտենում: Ավտոմոբիլում «Մենչեվիկ» մականունով հանրածանոթ մի մարդ եր նստած: Այդ մարդը

դռան զանգը ավեց թե չե, իսկույն դուռը բացին: Նահանգապետի բնակարանը մտավ նա (նահանգապետի բնակարանը նրա դիվանատան կողքին եր):

Շատ զարմանալի յեր, — կառավարության անդամներից ձայն-ծալտուն չեք լավում. կարծես իրենց սեփական ձեռներով կառավարությունը բուլչեկիներին էլին հանձնել: Նահանգապետը ապստամբների իրավունքի տակն եր արդեն: Նահանգապետ, պրիստավ և կառավարության մնացյալ անդամներն ապստամբության մասին ղուր ունեյին անշուշտ, բայց, վորպես թե վոչ մի պատրաստություն տեսնել չէլին ուզում: Սակայն մի քանի ըոպեյից դրությունն ամբողջապես պարզվեց: Ներքեի կողմից յասուլները, վերեկից ել գյուղի դռնունքը նահանգապետին ողնելու շտապեցին:

Պահակ կանգնած գյուղացիները զորանոցում ժողով գումարողներին պարտավորվեցին դուրս կանչել: Նրանցից յուրաքանչյուրը մի քանի գնդակ արձակեց:

Հարձակման դիմողները բոլորն ել ձիավոր էլին: Հրազենի ձայները մի քանի ըոպեյի ընթացքում ամբողջ քաղաքը բռնեցին: Ապստամբները դուրս ցատկեցին իսկույն և զորանոցի դիմացը տարածվող այգին մտան:

Մուխթար Ամիրն հրամաններ եր արձակում.

— Տղե՛րք, համազա՛րկ ավեք. չան վորդի յասուլներին, դռչիներին ջարդե՛ք:

Մոտեցած ձիավորներն աջ ու ձախ ցրվե-

ցին: Շտապ ճանապարհի մեջտեղը հասած լինելով՝ տեղացող գնդակները չըջապատեցին, կրակի տակ առան նրանց: Չիալորներէց վոմանք թեքվում էյին, ընկնում գետին, և... մնում անշարժ:

Մուխթար Ամին հրամաններ տալու համար Ժամանակ չունենալով այլևս, ձեռքի մատուցելը տախտակե պատյանին անցկացրեց, ապա ուղիղ նրանց խմբապետի գլխին նշան բռնելով՝ կանչեց:

— Խփե՛ք շանդորդիներին:

Հետո՝ հետ փախչող ձիալորների յետևից հրամայեց կրակ բանալ. իսկ ինքն այդու հաստ պատից թռչելով՝ խճուղու վրա կանգնեց:

— Յասաուլներին, ուղիղ նրանց աչքերէ մեջտե՛ղը... — կանչեց ու բարձր և սպիտակ ձի հեծած պրիստավի ճակատին նշան բռնեց:

— Խփե՛ք, խփե՛ք... — ձայնը հնչեցնելով Սարխանն էլ առաջ խոյացավ: Բանդորների շարքերից խանդավառ բացականչութուններ էյին լսվում:

— Յեա չփախչես, ո՞ւր ես ծլիվում, խփեցի՛... —

Մուխթար ամին յետ դարձավ. խմբից անջատվելու ցանկութուն ունեցող մի քանիսին նկատեց, ապա թրա՛ իսկ... մի գնդակ... Փախչելու ցանկությամբ բռնվածը գետին գլորվեց:

— Դավաճա՛ն, ստո՛ր, վախկո՛տ, խողի՛ ճոււ... —

— Առա՛ջ, առա՛ջ, ո՞ւր յես փախչում, աննամուս... —

Խումբը վողեորությամբ հարձակման անցավ, հետո յերկու մասի բաժանվեց, — առաջին մասը յասաուլների հետևիցն ընկավ, յերկրորդըն էլ նահանգապետի գրասենյակի վրա հարձակում դործեց:

Յուլշուն չեզոք չէր մնացել նույնպես: Վերևից — յերկրորդ անգամը հարձակման դիմող իրենց գյուղի դռներէից մի քանիսին ճանաչելով՝ նրանց խմբին եր միացել:

Չոփուր տղան յերեք ընկերների ուղեկցությամբ նահանգապետի տան վրա հարձակվելով՝ դուռը ջարդեց:

Ներքևից ավտոմոբիլի ձայն լսվեց: Ավտոմոբիլը վերևից ծածկված եր: Նահանգապետն իր ընտանիքով, ինչպես նաև նույն ավտոմոբիլով յեկող մենչեվիկը փախչում էյին արդեն:

Չոփուր տղան իր խմբակին դիմելով՝

— Ավտոմոբիլի մեջիններին, — հրամայեց:

Խմբակը փախչողներին յետևից կրակեց ցրելով: Ավտոմոբիլը դեպի կայարան ձգվող խճուղին կտրեց, անցավ և աչքից կորավ:

Քաղաքում հրազենի ձայներն ընդհատվեցին, թշնամի խմբերը՝ քաղաքը լքեցին:

Այժմ նրանց շրթներից հտուկալ խոսքերն էյին հոսում... —

«Իշխանությունը խորհուրդներին, գործա-

րանը՝ բանվորներին, իսկ հողը՝ աշխատավոր
պլուղացուն»:

Այս դեպքերի մի մասը Յուլիոն իր սեփա-
կան աչքերով տեսավ, մնացյալը՝ բերնե-բե-
րան շրջող հիշողություններից իմացավ:

Իրապես խիստ վաղաժամ մեռավ նա: Իսկ
յեթե այսքան վաղաժամ հող չմտներ՝ մի մեծ
խմբով, ապստամբության դրոշը բարձրացնե-
լով, իր ազիզ բարեկամ նահանգապետին յետ
վերադարձնելու համար՝ իր արյան վերջին կա-
թիլը չեր խնայի անշուշտ: Սակայն անգուժ
մահը նրա հույսերը տակն ու վրա արեց, նրա
պլանը փչացրեց:

Սարխանի մասին վորդուեն պատվիրաններ
տույիս՝ ամենից առաջ նա այդ հիմնական միտ-
քը նկատի ուներ:

Իսկ ուղղակիան դպրոցն ավարտած նրա
յերկու վորդիները, քաղաքում ծագած այս
դեպքերից հետո, տունը նամակ տեղեկություն
չեյին ուղարկում: Յուլիոն և Համզան համոզ-
վեցին, վոր նրանք կամ սպանվել են, կամ նոր
կառավարության կողմն են անցել: Նույնիսկ
ասում էյին, վոր յերկու սպա փախչելիս սպան-
վել են:

Գարնան անձրևոտ մի գիշեր էր: Սարխանի
կովի ճակատ մեկնելուց հետո յերկու որ էր ան-
ցել: Գիշերվա ժամը 10-ին, կղմինդրե տանի-
քով տան առաջ յերկձի մի կառք կանգ ա-
ռավ: Կառքի խորքում, յափնջի մեջ փաթաթ-
ված յերկու մարդ էյին տեղավորվել: Սկզբում

Համզան նրանց չճանաչեց: Հետո նրանցից մե-
կը, կարտով Համզայի վզովն ընկավ, և.

— Մեր հայրը մեռել է ուրեմն... — ա-
սաց: Համզան իր այտերի վրա ծորած արցուն-
քի կաթիլներն արխալուղի թևերով սրբեց և
դարձյալ մի քանի անգամ հեկեկաց:

... Վաղուց իրար չտեսած յեղբայրները
մինչև գիշերվա կեսը խոսեցին, ուրախացան:

Համզայից մեծ յեղբայրը կապույտ մա-
հուկից կարած թանկագին մի պինջակ էր հա-
գել: Նրա ուսերի վրա ուսադիրների հետքեր
կային:

Յուլիուն կինը մի անկյուն նստել՝ իր տղա-
ների խոսակցությունն էր լսում հափշտա-
կությամբ: Ամուսնու մահվանից հետո անչափ
տխուր էր նա, այսոր նրա աչքերն ուրախու-
թյան կայծերով լցվել էյին, այսոր ուրախ էր
նա: Իր տղաների համար փիլավ յեփեց: Փի-
լավի տակը նոր մորթած գառան բուտ էր դրել:

Նա իր վորդիներից մեծին— Շամսին էր
չատ սիրում: Շամսին լավ պաշտոններ էր վա-
րում: Վերջին որերում նա Գանձակումն էր
ապրում և զնդի հրամանատարի պարտականու-
թյուններն էր կատարում: Մուսավաթականնե-
րի պարտվելուց հետո վողջ մնաց և «հայրենի-
քը» փախչելու բախտն ունեցավ:

Նրանց վերադարձի և կյանքի մանրամաս-
նություններին, իրենցից բացի, ուրիշներն էլ
տեղյակ էյին: Սակայն նման վտանգավոր ժա-
մանակամիջոցում նրանց հորենական տունը

վերադառնալու պատճառի և նպատակի մասին՝
իրենցից բացի վոչ վոք տեղեկություն չունենր:

Ամեն պարագային՝ այս յերևույթն ել իր
պատճառն ուներ: Համդան և իր մայրը նրանց
մտադրությունն ու նպատակն իմացան, բայց
գաղտնիքը մնաց վորպես գաղտնիք, թագնված
ծանր քարերի տակ...

Շ Ի Ր Ա Լ Ի Ն Լ Ա Լ Ի Ս Ե

Սրամ գետի վրա ձգված կամրջի ա-
րևմտյան կողմի լեռան լանջից դեպի հյուսիս,
խորդուբորդ մի ճանապարհ եր յերկարում:
Սովորական կածանի նմանող այս ճամբի աջ
կողմից գալար-գալար անցնող Կուր գետը,
մյուս կողմի կանաչ ուռիներն ու այդ ուռինե-
րի անտառին զուգահեռ յերկարող բարձր
բլուրները՝ կարծես իրենց վողջ կյանքի ըն-
թացքում մարդու յերես չտեսած՝ վայրի, լուս-
ու թափուր եյին:

Քարոտ ճանապարհի յերկու կողմը կա-
նաչ, լեռնային խոտն եր բարձրացել: Զեփյու-
ռի տևական շնչից ալիքավորվում եր խոտը,
կարծես ծո՛վ յիններ: Սոտը թեքվում եր, բարձ-
րանում, բարձրանալիս յերկարում, յերկարե-
լիս գեղեցկանում եր:

Գունազեղ գորգերի միջից ընթացող ճամ-
բան հաճախ կորչում եր և դառնում անհետ:

Կովի ճակատից յերկու վերստ հեռավորու-
թյան վրա տեղավորված Սարխանենց գյուղը
Մուղանլուի հետ այս ճանապարհի միջոցով
երձիանում:

Գեղեցիկ, զարդարուն և այնքան քաղցր

այս վայրերը՝ հաճելի, անուշ զգացումներ ե-
լին պատճառում:

Բասն ըոպե սրանից առաջ, յերկու մարդ,
կանաչ խոտերի հետ գերիկ-գրիկ, ծաղիկների
արանքը ճեղքելով՝ դեպի կամուրջն էլին գնում
ուղիղ. յերբեմն ել յետ ու առաջ, հետո իրենց
չուրջը նայելով շարունակում էլին ճանապար-
հը:

... Հարավում, յերկու յերկրամասերի
սահմանը հանգիսացող խրամատները պատա-
ռոտուն շորերի նման ասրածվել, յերկարել ե-
լին:

Միաչյա հեռագիտակը կողքից կախ արած
Սարխանն իր պսակած տեղից ծնկների վրա
բարձրացավ խրամատում:

Կովի ճակատը լուռ եր:

Պարտիզաններն էլ լուռ էլին:

Հազիվ մեկը բերանից մի խոսք բաց թողեց:
Իսկույն ամեն կողմից սկսեցին խոսել: Խրա-
մատում նստած պարտիզանները վուչ մի բանից
չքաշվելով՝ իրար խոսք էլին նետում, ծիծա-
ղում, յերբեմն ել, իրենց մեջ Սարխանի նվիր-
վածութունը հաճոյախոսության նյութ
դարձնելով՝ քրքրում էլին մտերմարար:

Ծիծաղելու մեջ Շիրալին առաջին մրցա-
նակն ստացավ: Նա կրեն շրջապատող և այ-
տերին շարունակ համբույրներ դրոշմող թարմ
խոտերը մի առ մի պոկելով՝ բերանն եր տա-
նում և ծամում:

— Այտեղ, Սարխանի կենացը մի լավ

թղթախաղ կարելի չե կազմակերպել: Ափսոս
կարտ չունենք: Յեթե կարտ ճարեյինք՝ «Գու-
րե-Գու» կխաղալինք:

Խոսքը վերջացնելիս, Սարխանի վոզեոբու-
թյունը նկատելով՝ բարձրացավ կանգնեց ու-
ղիղ և իր քնատ ու խորմանկ աչքերը նրան հա-
ուեց:

Սարխանը կատակող ընկերների թևից
բռնելով՝

— Գալի՛ս են... — ասաց:

Հետո, շատ կամաց, մի քանի բաների մա-
սին ել խոսեց:

Պարտիզանների ծիծաղը շրթներին սառած
մնաց: Այդ ըոպեյին նրանց յերեսին նայողը
դժվար կարողանար ասել, թե սրանք մի ըոպե
առաջվա կատակասեր և ուրախ մարդիկն են:

— Նայե՛ք, չե՞ք նկատում, բլրի աջ կողմից
գույգ-գույգ առաջանում են. զգո՛ւյ՛շ կրակել,
իդուր գնդակ չարձակե՛լ, — ազդարարեց Սար-
խանը և հեռագիտակով շարունակեց հետազո-
տել հեռուները:

Իր շրջապատն ու յերեսը շոյող թարմ ողջ
թոքերում համաքած՝ շարունակում եր շտապ-
շտապ հրամաններ տալ նա:

Գոռալով՝ իր տեղից յելնող և ողի մեջ
պայթող լեռան ձայնի պես ուժգին մի գոռոց
լավեց, կայծակի ուժգնությամբ իջնող մի աղ-
մուկ, մի դղիրդ խրամատը ցնցեց: Սարխանն
խսկույն հասկացավ, թե ինչ դրության մեջ են
գտնվելու շուտով: «Արդեն մեր ճամբաները

փակված են, դուրս գալու ճանապարհ չունենք» — ասելով՝ սկսեց մտածել, հուզվել: Սակայն նա իր ուղեգրը ճնշող մտքերն հաղթահարելու առթիվ ունեցած վախից մյուսներին բաժին չհանեց, և իսկույն հանգստացրեց ինքնիրեն:

Պարտիզանները, ձորից չավող այս աղմուկի և գոռոցի պահին՝ ականջները սրած իրար յերես նայեցին:

— Ի՞նչ կա, ի՞նչ պատահեց: Ձեր գործին կացեք, կրա՛կ:

Սարխանը՝ հրամանները չընդհատելով՝ աշխատեց մի քանի բոպեյի ընթացքում նրանց բոլոր մտքերը մի կետի շուրջը կենտրոնացնել:

— Առջևից յեկողներին... ո՞ւր եք նայում, յեկողներին չե՞ք տեսնում, — խստությամբ ասաց Սարխանը և իր աչքի տակով կամուրջին նայող մի պարտիզանի վրա գոռաց:

— Առա՛ջ...

Պարտիզանները խրամատներից դուրս ցատկելով՝ ուրուրի նման առաջ նետվեցին: Սարխանն իր աջ կողմը շեղջված հողակույտի յետևն անցավ և հեռադիտակը մոտեցրեց աչքերին: Մենչևիկյան զորքը ձորն եր իջնում:

— Գնդացի՛ր...

Մի պփրտիզան «Լուխ» գնդացրից կրակ չաղ տվեց:

Կամուրջի կողմից մի անգամ ել ձայն լրսվեց:

Սարխանն տկամա դարձավ՝ յետ նայեց

կրկին: Նա շատ լավ գիտեր, վոր իր փոքրիկ պարտիզանական խումբը յերկար ժամանակ չսլիախ կարողանար գլխադրել այս վայրերը հեռախուզելու յեկած մենչևիկյան զորքին:

Բայց հույսը չեր կտրում: Նա հավատացած եր, վոր գավառի կենտրոնից ուղարկված Կարմիր բանակի մասերը շտապ ոգնության կհասնեն: — «Գուցե թշնամին կամուրջը քանդի, մերոնք ոգնության չգան, հետո ի՞նչ պետք է անենք» — մտածում եր ինքնիրեն: Ապա ինքն ել պատասխանում եր իրեն, «մինչև մահը կկռվե՛նք»:

— Կրա՛կ...

Խմբի ուժեղ կրակը բոլորին սիրտ տվեց, բոլորն ել վողեկորվեցին. նրանց արձակած գնդակները կարծես մոտալուտ հաղթանակի մարշն էյին հնչեցնում:

Սարխանը չեր հանդարտվում. կամուրջը մտքից հանել չեր կարողանում: Կամուրջի այրվելն այնքան ել մեծ դժբախտությունն չեր, բայց պարտվելը... ծանր եր խիստ: Պարտության համար բացվող բերնին փականք պետք եր գնել: Ո՞վ կհամարձակվեր խոսել այդ մասին, ո՞վ կհանդգներ այդ խոսքը բերնից դուրս հանել: Վոչ, միայնու միայն հաղթության մասին, այն ել արյունով, գենքով, հերոսությամբ ձեռք բերվող հաղթության մասին կարելի յեր խոսել:

Իր կամքից անկախ՝ աչքերը ձորից սև յերիզների նման բարձրացող ծխին հառեց:

Հրկիրզված «Սընըք Քյոփրուն» բոցեր եր
արձակում:

Մերթ պարտիզաններին, մերթ ել վառվող
կամրջին եր նայում նա: Հանկարծ Շիրալին
հուզված կանչեց:

— Վա՛ա՛ա՛ա՛ա՛ա՛յ, կամուրջը վառվե՛ց...

Յերկաթի դիմացկունությունն հայտարե-
րող պարտիզանները՝ Շիրալու արձակած խոս-
քի դառնությունը տանել չկարողանալով՝
չարժվեցին, շուռ յեկան:

Յերեկվանից վոչինչ չէր կերել Սարխանը. հի
մա իր նիհար կոկորդում հավաքված դառնու-
նությունն եր ծամում նա և, շտապ պատաս-
խանելու ցանկությամբ լցված, դժվարանում
եր բառեր գտնել: Դրա համար ել հրացանի
փողի հետն եր խաբում շարունակ: Դառնալով
չըջապատի պարտիզաններին՝

— Շիրալին շատ հիմար գործեր ե տես-
նում... Եսպես ել բան կլինի՞... — ասաց և
դառնացած մարդու նման գետին պռակեց, ա-
պա շրթները ծամելով հեռատիզակն աչքերին
տարավ:

Չանցած մի քանի րոպե, իր միզամած յե-
րեակայությունն ու մտածումները վանեց,
և, վճռական մի տոնով ասաց.

— Թող վառեն, մենք ճանապարհ կգրա-
նե՛նք:

Սարխանը զղջաց Շիրալու մասին քիչ առաջ
արտասանած խոսքի համար. նրան արժանի
խոսք չասաց նա: Յեթե այդ խոսքի պատճառած

վնասը նախատեսելու գիներ, գուցե բնավ չար-
տասաներ: Շիրալին լավ, անդամաճան ընկեր
եր:

Սարխանն այդ բանը շատ լավ հիշեց: Ու-
րիչ անգամ Սարխանի ստածներն իբրև կատակ
եր ընդունում նա, ծիծաղում, բայց նման տագ-
նապալի բոպեններին, կյանքի և մահու վճռա-
կան ժամին, կատակը մի կողմն եր թողնում:

— Շիրալի՛, դնա՛նք, — առաջարկեց նրան
Սարխանը և դեպի կամուրջն ուղղեց քայլե-
րը, բայց շատ չհեռացան: Հետո ամբողջ
խմբով կամուրջի վրա հարձակվելու մասին
մտածելով՝ դիմեց ընկերներին.

— Տղե՛րք, դեպի կամու՛րջ... Առանձին-
առանձին, աշխատեք ձեզ ցույց չտալ:

Վոմանք գնալու տրամադրությունն չունե-
լին, բայց մեծամասնությունը Սարխանին հե-
տևելու պատրաստ-խրամատները դատարկեց:

Յեվ աջ և ձախ կողմերից առաջանալով՝
մինչև Սրամ գետի յեզերքը հասան: Կովի
ճակատը հանդիստ եր: Հրագենի ձայները չե-
լին լուել սակայն: Սարխանն ու Շիրալին կա-
մուրջի վերևից անցնող խճուղուն մոտեցան:
Պարտիզաններից շատերը նրանց հետևեցին:

Վոմանք հեռ ելին մնացել, շեյրս շա-
մարձակվում առաջանալ: Հրկիրզված կամուր-
ջը տեսնելով՝ սարսափի ելին մատնվել:

Սարխանը դարձավ, յետ նայեց, — ճիշտ
վոր դալու ցանկությունն չունելին դրանք:

Թ՛չնամու աչքին անտեսանելի դառնալու աս-
տիճան ծովելով՝ նրանց մոտ դնաց Սարխանը:

— Ինչո՞ւ չեք գալիս:

Կամրջին մոտեցած պարտիզանները
նույնպես յետ դառնալով՝ գետափի փոսերի
մեջ տեղավորվեցին:

— Ինչո՞ւ չեք գալիս, — կրկնեց Սարխա-
նը:

Այս անգամ նրա ձայնն ավելի բարձր հըն-
չեց:

Պարտիզաններից մեկը ցատկոտ մի հա-
յացք ուղղեց Սարխանին և հարցրեց.

— Դու մեզ ո՞ւր յետ տանում:

Մեկ ուրիշը նրա միտքը հաստատեց:

— Ա՛յ մարդ, եդ տեղերից մենք վողջ
առողջ կարո՞ղ ենք յետ գալ, — ասաց:

— Եդ տեղերից մարդ...

Յերրորդի խոսքը կտրելով՝ մի պարաի-
զան նույնպես առարկելու ցանկությամբ
բռնվեց:

— Մեր բարեկամ Սարխանն ինքնիրեն
բոլորովին կոցրել է, հա՛... .

Սարխանն այս անսպասելի խոսքերը լսե-
լիս՝ ասես կանգնած տեղը չորանում եր:
Սարսափով և միևնույն ժամանակ վողեւորու-
թյամբ լի աչքերով՝ իր տված հրամանները
խախտող կողքի մարդուն նայեց: Մոտիկ
կանգնած վեց մարդուց և վոչ մեկը տեղից
չարժվել չեր ցանկանում: Սարխանի առաջար-
կին համաձայն չեյին, նրանք գետի այդ ափով

դնալն ու ներքևից գետն անցնելու առաջար-
կը մեջտեղ բերին: Բայց Սարխանն իր առա-
ջարկության վրա կանգնել եր հաստատ:

Նա շատ լավ դիտեր, վոր ամենամեծ
վտանգը կամրջումն եր թաղնված: Վորով-
հետև կամուրջի ներքևի այրերում մի զորա-
բանակ նույնիսկ հեշտությամբ կարելի կլի-
ներ տեղավորել: Գուցե նույնիսկ հիմա, թըչ-
նամու զորքն այնտեղ է, խրամատներ է պատ-
րաստել և տեղավորվել: Մեկ ել, նա հալա-
տացած եր, վոր այս կողմից կատարված հար-
ձակումն ամեն պարագային թ՛չնամու հաղ-
թանակով եր վերջանալու: Այսպես մտածելով՝
Սարխանն ինքնիրեն դիտմամբ կրակի մեջ
գցելն ու մյուս ափում դուրս գալը գտնում
եր միանգամայն անհրաժեշտ:

— Վե՛ր կացեք, ասում եմ ձեզ...

— Դու ի՞նչ ես խոսում, Սարխան:

Սարխանն հակառակող մարդուն նայելով՝
յերկու-յերեք անգամ թուփը կլլեց: Մի ան-
գամ ել նայեց, և,

— Կանգնե՛ք, ասում եմ ձեզ, — կանչեց,
հետո՝ ավելացրեց, — չեկողը՝ թող իրեն մե-
ռած համարի:

Այդ խոսքը՝ թ՛չնամու կողմից արձակված
անկարգ կրակը ողում ցրելի տվեց:

Թըրա՛խկ...

— Վեր կացեք, կանգնե՛ք:

— Դու ինքդ դնա...

Սարխանն ուսից հրացանն իջեցրեց և իրար

հետեւից յերկու զնդակ արձակեց: Նետված զնդակները՝ խոսք չհասկացող պարտիզանի վոտներին մոտիկ մի տեղում փոշի բարձրացրին: Նրանք հասկացան արդեն, վոր Սարխանը չատ է ջղայնացել, դրա համար ել վոտքի կանգնեցին:

Դեպի կամուրջ հարձակումն սկսվեց: Այրվող կամուրջից աղմուկով սկսան անցնել նրանք արդեն:

Երապնելի զնդակը մի անգամ կամուրջի վրա պայթեց: Պարտիզաններն առանց յետ ու առաջ նայելու՝ անցնում էին արաղ: Թնդանոթի արձակած ուղմբի բեկորները յերկու մարդու գետին տապալեցին: Նրանք կամուրջից բարձրացող սև ծխի մեջ ընկղմած մնացին:

Մյուս ամի անցնելուց հետո՝ պարտիզանները կամուրջի տակի քարայրը լցվեցին: Սարխանը խզված ձայնով բղավեց նրանց յերեսին.

— Վորտե՞ղ եք մտնում, կամուրջը փլուլու յե... ո՞ր եք գնում...

Շիրապին իսկույն յետ դարձավ. ընկերները նրան հետևեցին նույնպես, կամուրջի վրա տեղացող զնդացիների ձայները լսելով՝ գետափին, մի հարմար տեղ ապաստանեցին նրանք:

Կամուրջից բախկանին հեռու, յլեռան լանջով ժայռերի վրա բարձրացած յերկու մարդու կերպարանք յերևաց հանկարծ:

Սարխանը նրանց նշան բռնեց: Նրանք ել իրենց հերթին զնդակներով պատասխանեցին Սարխանին: Սմբից բաժանվելով՝ յերեք-չորս հոգի դրանց հետապնդելու գնացին:

Քիչ հետո նրանցից մեկի դիակը գետափը հասցրին գետնաքարչ: Մյուսին վողջ եյին բռնել: Սարխանը՝ նրա վրա հսկող մի պահակ նշանակեց:

Նոր իրամատներ փորվեցին: Պարտիզանները կամուրջից ներքև գտնվող առվի ափին իրենց համար պատասպարան սարքեցին: Վոմանք ել խոշոր ուռիների տակն էյին ապաստանել:

Սարխանը խմբի մեջտեղն եր կանգնել: Նրան կրկին ջղայնացնում էյին:

— Յեթե դու չլինեյիր, մերոնցից վոչ վոքի զնդակ չեք կպչի: Աստծու փորձանքը գըլխի՞դ թափի թող...

— Շատ ել ճիշտ ե ասում... — իզուր տեղ ծերունուն զոհ տվիր:

— Յես ասացի. ներքևից անցնենք գետը, խոսքիս ականջ չկախեց...

Շիրապին լալիս եր թեև, բայց Սարխանին մի խոսք անգամ չասաց: Սպանվածներից մինը նրա ծերունի քեռին եր:

Բարձրահասակ, մոթալ փափախավոր մի հովիվ, առանց Սարխանին հարգելու, լեզվի ծայրին յեկածը դուրս եր տալիս:

— Գատարի գլխի տեր մարդու գործը

դատարկ է լինում միշտ. աչքի տեսածը
կո՛ւյրը չի կարողանում տեսնել միայն:

Այդ բուպեյին մենչեիկյան ջոկատները
գոռալով դեպի կամուրջ հարձակում գործե-
ցին:

Սակայն կտրուկ դիմադրութեան հան-
դիպեցին նրանք: Գալատի կենտրոնից ոգնու-
թյան հասնող կարմիր վաշտերը կրակի տա-
րափի տակ առան նրանց: Հսկայական ձորը
հրեղեն կրակի մեջ վառվում էր, մարդկանց
աչքերն արյան գույն եյին ստացել: Գարերն ու
ժայռերը տեղից պոկվելով պար յեկան, հողն
ու փոշին ողբ պատեցին:

Հեծելազորի խմբերն էլ հասնելով՝ գետի
ջուրը ձեղքեցին և հարձակման անցան:

Սակայն, Շիրալին իր քեռուն չէր կարո-
ղանում մոռանալ, լալիս էր դեռ: Բայց իր լա-
ցը Սարխանից թազցնելու համար յերեսը գետ-
նին էր քսում:

— Եղտեղ լացողն ո՞վ է: Կնիկարմա՛տ...

Շիրալին հասկացավ, այդ բառերն իրեն
էյին ուղղված. հեծկլտանքը կուլ տվեց և լաց
չեղավ այլևս: Կողքին կանգնած մարդկանցից
մինը նրան փոխարինող դարձավ կարծես հան-
կարծ:

— Ինչե՞ լաց չլինի, քեռուն զոհ տվիր, —
ասաց և Սարխանի դեմքին նայեց:

— Չենդ կորի՛ր, ախմա՛խ... կյանքի և
մահվան բուպեներին նման բաներ խոսելն ար-
դեվում է...

ՃԱԿԱՏԸ ՃԵՂԲՎՈՒՄ Ե

Պարտիզանական խումբն այրված կա-
մուրջի ձախ կողմից փախչելով՝ վոչ այնքան
բարձր մի բլրի յեռևում ամրացավ: Դեռ
չլուծ թնդանոթի ձայնից լեռները, ձորերը
թնդում էյին:

Այդ ուժեղ հարձակումը պարտիզաններին
բավականին վախեցրեց: Այն միտքը, թե կա-
րող է պատահել, վոր պարտվեն՝ շատերին եք
վշտացնում:

Այժմ նրանք թե իրենց դեմ կանգնած թըչ-
նամու և թե իրենց ներսում հետոհետե աճող
պարտութեան վախի հանդեպ անխնա կուլի ան-
ցան: Մեկը մյուսին սիրտ էր տալիս: Մի պար-
տիզան՝ գույնը թոցրած իր ընկերոջը կշտամ-
բում և դառն խոսքերով նախատում էր:

— Ինչո՞ւ յես վախենում, մահվանի՞ց ես
սարսափում, նամուսով մեռնելուց ավելի ինչ
լավ բան կա, ա՛յ գլուխը մեռնի:

Նման խոսքեր զանազան ընկերների միջև
էյին շրջում: Յեվ արտասանված յուրաքան-
չյուր խոսքն իր պատասխանն էր ստանում:

— Վախենալն ի՞նչ բան է. եղ բանը կնիկա
փեշակ է:

— Գեզնից անվախ կանայք շատ կան.

ինչո՞ւ «կնկա փեշակն» ե ասում ես. հարյուր քեզ պես մարդու հավասար կանայք ել կան:

Մի կողմ՝ յերկարած և նման խոսակցություններ լսող Շիրալին ասաց.

— Մարդը կվախենա յեւ, զոչախություն ել կանի, միայն հիմի չե, վորովհետեւ...

Ոսոքը չկարողացավ վերջացնել: Սարխանն ընդարձակ անտառից արշավելու պատրաստ, գեղին շինելավոր վրացահայն զորքը նկատելով՝ «կրա՛կ...» գոռաց: «Վորովհետեւ» բառը Շիրալու բերնում մնաց: Փամիւռուտը հրացանի մեջ դնելուց հետո պառկեց նա:

Սարխանն այդ բոպեններին խիտ ուշադիր եր և շրջահայաց: Նա և՛ դիմացից յեկողներին, և՛ թե ընկերներին առանձին-առանձին զննումն եր, նրանց ուժերը չափում, ձևում, նայած տեղին և պայմաններին՝ նրանց տեղն ու գերքը վորոշում: Յերկչոտներին՝ սիրտ եր տալիս, սովորեցնում. մի խոսքով՝ ամեն մեկին մի կերպ ոգնության եր հասնում: Յերեւի այդպես ել պետք եր: Բայց ամենից շատ Շիրալուն եր ուշադրություն դարձնում նա: Սրանից յերկու-յերեք որ առաջվա և ներկա Շիրալու միջև մեծ տարբերություն եր նկատում: Կովի սկզբում կարտ խաղալու մասին խոսող, խրամատի զրուցասեր և կատակասեր Շիրալին, պատառտուն, գզգզված զգեստներով Շիրալին ինչքան վտխվե՛լ եր այժմ, ինչքան բարեխի՛ղճ եր դարձել:

Սակայն, արևելքից գեպի հարավ յերկա-

րող յերկաթուղու միջոցով մինչև հրդեհված կամուրջը հասնող, ապա Կուր գետը ձեղքելով անցնող տանկերը խմբին մեծ աջակցություն ցույց տվին: Սարխանի, Շիրալու և խմբի բոլոր անդամների յերեսի ժպիտները մեծացան, բազմապատկվեցին. նրանց կամքը, մտքերը, նպատակները, ամեն, ամե՛ն բան ամրացրին, դարձրին կուռ, հաստատուն:

Հատկապես Շիրալու աչքերի մեջ մանկան անմեղությունն արտահայտող մի պայծառություն եր նկատվում:

— Կամուրջը վառեցին, վնաս չունի, մեզանից մի քանիսը սպանվեցին, ինչ արած, — ասելով յերեսը գեպի Սարխանը դարձրած՝ Շիրալին իր քեռուն հիշեց կրկին, մի քիչ տխրեց, հետո՝

— Յերբեմն պատվով մեռնելու դեպքեր ել են պատահում, — ավելացրեց:

Տանկերը՝ Կուր գետի խենթ ալիքները տերեխ պես պատառտելով՝ պղտոր ջուրն ողում շաղ եյին տալիս, անցնում ավից բավականին հեռու. լեռան կանաչ դրժքում ամբացան նրանք:

Պարտիզաններն իրենց ներքին ուրախությունն արտացոլող հրճվաչի աչքերով տանկերին եյին նայում անթարթ և անաղմուկ ծիծաղում:

— Ես աժդահաները մինչև հիմի վորտե՞ղ եյին թագ կացել, — ասաց Շիրալին խմբի լուռությունն ընդհատելով և Սարխանին նայելով:

Ուրախությունից Սարխանն ել եր ծիծաղում. բաց չբխերի արանքից յերևում էյին նրա սպիտակ ատամները: Այտերի վրա ծաղկող հրճվանքը՝ բոլորին ել ուրախացնելու ազդանշանը լիներ կարծես: Այժմ բոլորն ել ծիծաղում, ուրախանում էյին...

Տանկերը շարժվեցին. լեռան զանջերից անտառը մտան. տարրորինակ ձայներ էյին հանում նրանք:

Մի կողմ նստած՝ կարոտով իր քեռուն հիշած պահին արտասվելիս՝ Շիրալու այտերի վրա սև հետքեր էյին մնացել: Հիմա այդ հետքերի վրա անչափ ժպիտներ էյին խաղում: Հիմա Շիրալին ել եր ծիծաղում:

Կարմիր բանակայինները գնդացիրային կրակը սաստկացրին: Տանկերն անտառում աչքից անհետացան:

Գետին յերկարած պարտիզանները գնդակ չէյին արձակում այլևս:

Քաղցր ու բարակ քամի յեր փչում: Զով ողբ բավականութամբ շնչելով՝ նրանք իրենց հայացքը տանկերի անտառը մտած տեղից չէյին կարող հեռացնել:

— Վե՛ր, վոտքի՛, — կանչեց հանկարծ Սարխանը:

Բոլորն ել վոտքի յելան, հրացանները պատրաստեցին: Սարխանը, ապա մյուսները, կրկնակի ծովելով հեռ քաշվեցին: Զիերը ձորում էյին, Կուրի ափը, քարոտ, ամալի մի վայրում, ուռի ծառերին կապված: Յերեք ու

ե, ինչ գարի չէյին կերեղ նրանք, դրա համար ել ուռենիների կեղևներն էյին կրծոտում: Մտուրի բները դարձել էյին խայտաբղետ:

Զորից խորը մի աղմուկ եր գալիս:

Զիերը հեծան նրանք:

Յեղանակը հիմա ավելի զով եր դարձել: Կովկասը հրճվում եր. ձյունոտ լեռների ճակատից, յերեսներից բծերն ու կեղտերը ջրնջվում էյին: Յերեկնակամարում ման յեկող ամառային ամպերը՝ տանկերի աղմուկից ասես վախեցած՝ նստանում, փախչում էյին:

Սարխանը ձեռքի բարակ ու ճկուն ճիպոտով ձիուն հարվածներ հասցնելով յերբեմն, քառատրոփ դեպի վերև արշավեց:

Շիրալին հետևում եր նրան:

Պարտիզանները թշնամու գնդակից ապահով մի տեղ քաշվեցին: Նրանք կամուրջին մոտիկ մի վայր էյին ընտրել իրենց համար: Կամուրջը ցրիվ յեկել, ընկղմել եր: Զոր կմախքի նմանող նրա ծուռ ու մուռ սյուների վրայից հնարավոր չեր անցկենալ: Կամուրջը թշնամու ձեռքի ափի մեջը լիներ կարծես: Թշնամու գրնդակները կարկուտի պես էյին թափվում այդտեղ հիմա:

Խմբի կարծիքը յերեքի բաժանվեց, առաջինը՝ «Մընք քյոփրուից» անցնելու կողմնակից եր: Յերկու պարտիզան հակաճառելով՝ սպասելու առաջարկ արեցին: Սարխանն այս յերկու առաջարկություններն ել մերժում եր:

— Կուր զետից անցկենալն ամենքից լա՛վն
ե, — ասում եր նա:

Մի քանի պարտիզաններ դեպի կամուրջն
եյին գնում: Սարխանը նկատեց նրանց և բղա-
վեց:

— Ընկերներ՛ր, կամուրջը քանդվե՛լ է, մի
մարդ նույնիսկ չի կարող անցկենալ: Արեք
դետից անցնենք, շո՛ւտ, ժամանակ մի՛ կորց-
նեք:

Եիրալին Սարխանի առաջարկությունը
պաշտպանելով՝ կողքի ընկերոջն աչքով արավ,
բայց այդ ընկերը համաձայն չեր: Նա վիզը քե-
րեց և քիթն ու բերանը ծռեց: Սարխանը խիստ
հայացքով դեպի կամուրջ մեկնողներին նա-
յեց, և չարացած՝

— Աչք չունե՞ք, ինչ ե... ենտեղ թափվող
գնդակները չե՞ք տեսնում, — ասաց:

Իրապես վոր կամուրջի քարերը, փայտերը
պար եյին դալիս ողում:

Սարխանի դու ձայնը նրանց ականջներում
հնչեց: Քնից արթնացածի պես սթափվեցին
նրանք:

Սարխանը յերեք որից ի վեր պոչի հան-
դույցը չբանդած աչխես ձիու յերկու կողերին
քսեց վոտները, ապա մի քանի անգամ խթա-
նեց: Ձին ականջները ցցեց, գլուխը դեպի վեր
բարձրացրեց, վորսի վրա հարձակվող հովազի
նման ինքնիրեն հավաքեց և հանկարծ Կուր դե-
տի հորդ ալիքներին հանձնվեց: Սարխանն ա-
ռանց յետևը նայելու քշում եր ձին. կարծես

ալիքներին միանալու, խառնվելու մտադրու-
թյուն ուներ: Մի քանի բուպեյից դետի կեսը
կտրել եր արդեն, բայց պարտիզաններից վո-
մանք կասկածոտ եյին կրկին, վախենում, ձիե-
րը քշել չեյին ուզում:

Եիրալին սև մատակ ձիուն վոտնահարեց:
Նրա մեկնելը նկատող պարտիզանները մեկ-մեկ
դես մտան:

Գլխավորապես թույլ ու նիհար ձի ունե-
ցողները գետում սուղվելուց վախենում եյին
չատ: Բայց նկատի ունենալով, վոր ընկերներից
հետ մնալն անհնարին է և կորստաբեր՝ քիչ հե-
տո Սարխանի յետևից առաջանալ սկսան մեկ
առ մեկ:

Յերբ խումբը մյուս տին հասավ՝ տանկե-
րը աննկատելի եյին դարձել արդեն, բոլորովին
հեռացել եյին: Բավականին դնալով, յերկու
հարյուր քայլ տարածություն կտրելուց հետո
միայն, անտառում, տանկերի յերթը նկատե-
լիս, Սարխանն համոզվեց, վոր հարձակման
անցնելը վաղ է դեռ և անժամանակ. նա իր ձիու
սանձը քաշեց. յետ մնացող ընկերներին եր
սպասում:

Յետ մնացած պարտիզանները հասն սրբն-
թաց: Սարխանն իր ձիու վիզը դեպի անտառի
ուղիղ մեջուղից անցնող ճամբան ուղղեց: Սա-
կայն քիչ վերջ խումբն իր ճանապարհը շեղեց,
դուրս յեկավ անտառից: Կարմիր հեծեքազորը
հարձակման եր անցել: Տանկերը նորից աղմկով

չարժուժ եյին: Սարխանը նրանց տեսնելիս՝
— Նրանց հետքերո՛վ, — կանչեց բարձրա-
ձայն:

Շիրալին հրացանը լցրեց և ձին մտրակեց
ուժգին:

Ամբողջ խումբն հարձակման անցած հո-
սանքին միացավ:

...Շատ չանցած՝ մենչեիկյան զորքից լճի
քանի թնդանոթ, գնդացիր և յետ մնացած մի
յերկու զինվոր պարտիզանների ձեռքն անցան:

Մի քիչ առաջ անհույս, գետից՝ անցնել
չուզող պարտիզանները կրկին ուրախացան,
հաղթանակից թևավորվեցին, ձիերին ավելի
չատ և շուտ-շուտ խթանել սկսան:

Բայց թշնամու լքած խրամատներն անց-
նելով առաջ նետվելու պահին՝ գնդացիրներն
ուժգին կրակ շաղ տվին. պարտիզաններն իրար
կպան:

Չիավոր խումբն իր բռնած գծից շեղվեց,
յերկաթգծի կողքից հեռանալով դեպի կարծր
ժայռերն ընթացող ճանապարհով սկսեց հոսեց:

Շիրալին յետ եր մնացել, բայց Սարխանը
խմբի առջևիցն եր գնում:


Այդ պահին՝ յետևից՝ ողբ պատռելով մի
ձայն եր գալիս, — ո՛... ֆ... մե՛ռ... նո՛ւմ...
ե՛մ...

Վերավորը փոփեց գետին, տարածվեց
խճաքարերի վրա:

Սարխանը յետ նայեց, սակայն յետ չդար-
ձավ: Արձակված «ուռաները» լեռներում, ձո-

րերում, անտառներում տեական աղմուկ եյին
առաջացրել:

Սարխանն իր ամբողջ ուժով՝ քշում եր
ձին, սլանում առաջ: Սև ամպերի արանքից
ռազմիկների վրա արև եր ծագել. ձիերի պայ-
տերն արծաթյա դրամների նման սլաղում
եյին:



ԳՐԻՆՖԵԼԴՈՒՄ ԽՆՋՈՒՅՔ

Կույի ճակատից յերեք վերստ հետ, Կուր գետի մյուս ափում, բերրի հողերով, աղբյուրներով շրջապատված և բազմազան գույնի տներով՝ գերմանաբնակ Գրինֆելդ գյուղն էր նրասել: Գրինին առատ էր այստեղ, ինչքան սիրտդ կուզի, բայց հացը համեմատաբար քիչ էր ճարվում: Գրինֆելդցիները հյուրասեր չեն. յերբեմն, լավ տրամադրութեամբ բոսիյին, յեթե գինով հյուրասիրեն քեզ՝ նույնիսկ մի պատան հաց չեն տա ձեռքը:

Սակախ... մի անգամ, մեր ընթերցողներին ծանոթ պարտիզանական խմբի այս գյուղում հանգստանալու որը, չգիտես թե ինչպես դրությունը փոխվեց: Իր սեփական այդում՝ գրինֆելդցի Բեթսուլդը պարտիզաններին խընջույքի հրավիրեց:

Յերկու որ է, վոր խումբը հանգստանում էր: Խմբի ղեկավարությունը Շիրալուն հանձնելով՝ Սարխանը գառափի կենտրոնն էր մեկնել և դեռ չէր վերադարձել:

Բեթսուլդը գիտեր, վոր այդ որը, յերեկոյան ժամի յոթին, խումբը մեկնելու յերեկոյն գյուղից: Դրա համար ել շտապ ազդականներին գիմեց, նրանցից հաց, գինի, ուտե-

լեղեն և այլ բաներ ստացավ: Պարտիզում մի մեծ սեղան պատրաստ էր արդեն: Անմիջապես Շիրալուն լուր ուղարկեց՝ խնդրելով, վոր էր խմբի անդամների հետ միասին բարի լինի գալու:

Շիրալին գերման գյուղացու հրավերն ընդունեց և այդ մասին ընկերներին տեղեկացրեց:

Սակայն Բեթսուլդի հրավերին պատասխանող պարտիզանները խնջույքին ներկայացան իրենց գեներով:

Շատերը զարմանում էին, — ինչը կարող էր պարտադրել ժլատ գերմանացուն, վոր այսքան ծախսեր անի և այսքան մարդու համար ճոխ սեղան կազմակերպի: Ասես մի շան գլուխ կար թաղված այստեղ...

Գյուղացիներից վրամանք կարծում էին, վոր թալանվելուց ազատ մնալու վախն էր գլխավոր պատճառը: Դժբախտաբար նման կարծիք ունեցողները սխալվում էին: Պարտիզանական խումբը վոչ մի բանի աչք չունենալուց բացի, վարդի չափ ծանր խոսք անգամ չէր ասել գերման գյուղացիներին, և ասելու պատճառ, ել չկար, մանավանդ, վոր այդ սոթիով Սարխանը նրանց անհրաժեշտ հրահանգներ էր տվել արդեն:

Գրինֆելդ գալու որը, մի քիչ հանգստանալու համար, նրանք դիմեցին գյուղացիներին և տեղ խնդրեցին: Տեղ ստացողները շնորհակալություն հայտնեցին տնատերերին, իսկ

չտացողները, առանց աղմուկի և գեղձու-
թյան, զնացին մի ուրիշ անկյուն՝ ճարելու
իրենց:

Բեթսուլդի այս հրավերը նույնիսկ Գրին-
ֆելդի գյուղացիներին խիստ զարմանք պատ-
ճառեց: Խնջույքի ժամին պարտիզի շուրջը
հավաքվել՝ մերթ պարտիզաններին եյին նա-
յում նրանք, մերթ իրար հետ խոսում զգուշ:
Անշուշտ այդ անակնկալ հրավերի մասին եյին
խոսում:

Բեթսուլդն իր մեծ վորդու միջոցով իրենց
գյուղի նվազախմբին ել յուր տվեց: Յերա-
ժըշտության աղմուկը վողջ գյուղը բռնեց:
Բայց այդ յերաժշտությունը պարտիզաններին
չգրավեց: Նրանք այդ բոպեյին ցորենից պատ-
րաստված մաքուր, դեղին հաց, հետո պանիր
և կարագ ուտելով եյին զբաղված միայն:

Բեթսուլդն իր հյուրերին մեծ-մեծ բաժակ-
ներ բաժանեց, վորից հետո գինին ել մեջտեղ
հանեց: Նրանցից շատ քչերն եյին սիրում խմել:
Սակայն պարզվեց, վոր խմիչքից հրաժարվող-
ները զրկվում են կերակուր ստանալու իրա-
վունքից: Դրա համար ել յերկու-յերեք հոգուց
բացի, բոլորն ել սկսեցին խմել: Նվազախում-
բը պարտիզանների սիրած արևելյան յեղա-
նակներն եր հնչեցնում:

Բեթսուլդը խմելուց հրաժարվող պարտի-
զաններից մեկին զխմելով՝

— Մեն եույում, — ասաց թուրքերեն լեզ-
վով և ձեռքի յերկու մատներով կոկորդի կաշ-

վից մի փոքրիկ մաս ցույց տվեց: Նրանց մի
կերպ համոզեց նա: Խմել չուզողներ չկային
այլևս: Վոմանք դեռևս առաջին անգամ գի-
նու համն առնելու համար, վոմանք իրենց ա-
ռած համը տեսած լինելու համար, վոմանք ել՝
պարտավորված խմեցին: Յերաժշտությունը
թնդում եր նորից:

Իրավացիորեն յուրաքանչյուր մարդու
կողմից մի հարց տալուն մենք նույնպես հա-
մաձայն ենք, — Բեթսուլդի այդ հյուրասիրու-
թյունը ի՞նչ նպատակներ եր հետապնդում ար-
դյոք:

Սարխանը յերեկվանից ի վեր զայստում
տեղի ունեցած համազումարի նիստերին մատ-
նակցելով՝ խոսողներին մեկ առ մեկ ունկնդրել
եր: Քիչ վերջ Նովրուզովը պետք ե յելույթ ու-
նենար: Համազումարին մասնակցելու յեկած
գյուղացիները Նովրուզովին չեյին ճանաչում
ցարդ չեյին տեսել նրան: այս համազումարում
ծանոթանալու եյին նրա հետ:

Ժողովին նախադահող Մուխթար ամին
սեղանի փոքրիկ զանգը մի յերկու անգամ հըն-
չեցրեց, ասա՛

— Խոսքը տրվում ե կուս. կենտ. կոմի-
տեյի ներկայացուցիչ ընկ. Նովրուզովին, —
ասաց:

Ժողովականները կենտկոմի ներկայացուց-

չին ընդունեցին խանդավառ ծափահարու-
թյուններով. ժողովասրահը թնդում էր:

— Ընկերներ, — ասելով գեկուցումն սկսե-
լիս՝ մի փոքր առաջացավ նա, հասավ մինչև
հուշարարի տեղը: Այժմ բոլորի աչքերը նրան
էյին ուղղված: Դահլիճում խորը լուսթյուն
էր տիրում:

Նովրուզովը մի հասարակ սպիտակ բլուզ
էր հագել. վոչ այնքան յերկար մազերը թեք
ասներած՝ ոճիքը բաց էր թողել:

— Խորհուրդների մեր այս համագումարը
կարևոր և նշանակալից մի ժամանակաշրջա-
նում է հրավիրված: Այսօր՝ հակահեղափոխու-
թյունն իր բոլոր ուժերը մորիլիզացիայի յե-
յենթարկել, — ասաց:

Ապա Նովրուզովը մասնանշեց Ղարաբա-
ղում գլուխ բարձրացրած հակահեղափոխու-
թյունը. խոսեց նաև հակահեղափոխությունն
առաջացնող հետադիմական ուժերի, մենչևի-
կյան հարձակումների, ինչպես նաև նրանց հա-
կահեղափոխական գծի և ընթացքի մասին:

— Հատկապես մի քանի ամիս առաջ մեր
կողմից ջարդ ու փշուր արված մուսավաթա-
կանների վերջին մնացորդները Ղարաբաղի
աշխատավորությունը կարմիր արյան մեջ թա-
թախելու և իրենց հետին մտադրություններն
իրականացնելու համար վոչ մի միջոցի առաջ
կանգ չեն առնում: Քյուրդիստանի մուսավա-
թական Սուլթանովները՝ քյուրդ աշխատավոր-

ությունը դեպի ազգային կոտորածներ մղե-
լով՝ նրանց արյունը հեղեղի պես հոսեցրին:

Նովրուզովը այդ գավառի մի քանի գյու-
ղերում կուլակների բարձրացրած ապստամ-
բություններն որինակ բերելով՝ այդ ապս-
տամբությունների ո՛ւմ կողմից և ինչո՛ւ հա-
մար առաջացնելը լուսարանել, բացատրել
սկսավ: Մոտ յերկու ժամ ու կես խոսեց նա.
Համագումարին մասնակցող պառլամափոր-
ները խորը լուսթյան մեջ լսում էյին նրան:
Նովրուզովը խոսում էր պարզ, շոշափելի որի-
նակներով, ձայնն էլ խիստ սղոցեցիկ էր: Ճա-
ռը վերջացնելու մոտ էր արդեն: Այժմ ձայնը
մի քիչ էլ բարձրացնելով՝ աշխարհում էր վեր-
ջակետը դնել:

— Նկատի ունենալով այս բոլորը, հեղա-
փոխությունը պահանջում է մեզանից, մորի-
լիզացիայի յենթարկել մեր բովանդակ ուժը
և թշնամուն վերջին ու վճռական հարվածը
հասցնել: Այսօրվա մեր համագումարին մաս-
նակցում են նաև կարմիր պարտիզանների ներ-
կայացուցիչները: Իմ վերջին խոսքը նրանց և
վերաբերում: Յերեսս նրանց դարձրած՝ հա-
մագումարի բոլոր անդամներին հայտարարում
եմ, — չնայած ահազին դժվարություններին՝
կովում հաղթանակը մենք տարանք, իսկ այդ
հաղթանակի պաշտպանության համար զենքը
մեր ձեռներից բաց չպետք է թողնել դեռ:

Դահլիճում առաջվանից մի քանի անգամ
սվիլի աղմուկ բարձրացավ. պատգամափոր-

ները ծախահարությունը բավական չհամարե-
լով՝ «ուռա՛» կանչեցին:

Սարխանը վերջին շարքումն էր նստել:
Չայն խնդրեց: Դահլիճում գտնվողները դառ-
նալով նայեցին նրան: Սարխանն իրենց միշտ
հերոսական կռիվների մասին պատմեց, իսկ
վերջը՝

— Ընկերներ՛, մենք մեր խորհրդային հայրե-
նիքի պաշտպանության խրամատներում մեռ-
նելու պատրաստ ենք միշտ ել—բացականչեց:

Ծախահարության ձայները դահլիճը թըն-
դացրին:

Համագումարի նիստը փակվելուց առաջ
բոլորն էլ վոտքի յեղան, «Ընտերնացիոնալ»
(գիացողները բաներով, մյուսներն առանց
բաների) յերգեցին: Բաց դռներից դուրս խու-
ժող ձայները փողոցում արձագանգ էլին
դտնում:

Ժամի չորսն էր, յերբ Սարխանը ժողովա-
սրահը թողեց: Նրա խումբը ժամը 3-ից վոչ
ուչ ճանապարհվելու յեր: Շտապով՝ իջևանն
հասավ, թռավ ձիու վրա և ուղիղ դեպի Գրին-
ֆելդը քշեց:

Գյուղը հասնելիս՝ Սարխանը վոչ վոքի
չկարողացավ ճարել: Տեղեկանալով պարտի-
զանների ուր գտնվելու մասին, ամենայն արա-
դությամբ Բեթսուլի պարտեզը հասավ:

Յեվ ի՛նչ տեսավ: Բոլորովին անսպասելի
մի տեսարան... հատկապես Շիրալուց նման

բաներ յերբեք չէր սպասում նա: Մի ժամից
հետո ճանապարհ պեսք էր ընկնել, և այդպես
հարբած դրությամբ... կռիվների խիստ թունդ
րուպենների հարբե՞լ: Մեկը մյուսին բռնո՞ւմ
էլին արդյոք:

Պարտիզանները բոլորն էլ հարբած էլին:
Բոլորի լեզուներն էլ խոսեցիս փաթաթվում
էլին:

— Չեր դենքերն ո՞ւր են, ո՞ւր են ձեր գեն-
քերը, — Շիրալու վրա դոռաց Սարխանը:

Ի՛նչ պատասխան կարող էր տալ Շիրալին:
Անչնորհք ու հին աշուղների նման ցաքուցրիվ
պատասխաններ էր տալիս նա: Սարխանը սառ-
տիկ զայրացավ: Տեղի ունեցած հյուրասիրու-
թյունը Բեթսուլիի սարքած լինելն իմանալուն
պես նրա ձեռքն ու վոտները կապեց: Պարտի-
զաններից և վոչ մեկի հրացանն իր մոտը չէր:

— Վորտե՞ղ են, հարցնում եմ քեզ:

Շիրալին տեղից վեր էր կացել. բայց դըժ-
վարանում էր վոտների վրա կանգնել: Այդպի-
սի դրության մեջ պարտիզաններից մեկը ձայ-
նեց.

Հարա՛յ ծիծիկներով հարսիկ,
Ծիծիծիկներն ուտելու հարսիկ:

— Ես րուպեյին վոտքի՛ կազնեք: Թո՛ււ քո
յերեսին, — ասաց Սարխանը, հետո ուժգին
ձայնով դոռաց և Շիրալու ուսերից բռնած՝
ցնցեց:

Պարտիզաններից մինը յերգում էր դարձյալ.

Ի՞նչ ես կանգնել լեռան գլխին ձյունի պես,
Ծիծիկներդ ծլել են քարմ նռան պես,
այ, նռան պես:

— Ո՞ւր են ձեր հրացանները, — կրկին անդամ հարցրեց:

Այս ու այն կողմից ձայներ բարձրացան:

— Մեր հրացանները վորտե՞ղ ե՛ն. . . , — ես ղամիչը վո՞ր տեղից մեջտեղ տնկվեց. . .

— Մեր հրացանները վորտե՞ղ ե՛ն. . . , — սասաց Շիրալին և աչքերը քթթելով նայեց Սարխանին:

— Ինձնից ե հարցնում, ա՛չքդ խոթվել բալքի հրացանդ. . . Ամոթ քեզ: Հրացանների տեղը ինձնից յես ուզում իմանալ: Չեր հրացանները թագցրել են:

— Թագցրե՞լ են: Չե՛, չե՛, եղպիսի բան չի կարող պատահել, — անհավատորեն պատասխանեց Շիրալին:

— Ինչպե՞ս թե չի կարող պատահել: Ապա ո՞ւր են:

Ամբողջ խումբը վտաքի յեր կանգնել:

— Ո՞ւր են ձեր հրացանները:

Այժմ բոլորի շրթունքների վրա այս սարսափազդու հարցումն էր շրջում:

Սարխանը՝ մի փոքր մտածելուց հետո՝ հանելուկը հեջտուլթյամբ կարողացավ լուծել: Հյուրասիրուլթյունը կազմակերպող Բեթսուլ-

ղին ճարեց և պարտիզի խնձորենուն կապել տվեց պինդ: Ապա պահանջեց, վոր թագցրած զենքերի տեղը ցույց տա իսկույն: Բեթսուլըն սկզբում ինքնիրեն անմեղ ձեվացրեց: Բայց յերբ Սարխանն ատրճանակի փողը նրա ճակատին ուղղեց՝

— Տա՛նն են, — պատասխանեց:

Սրանից հետո կարծես թեթևացավ Բեթսուլը, շունչ քաշեց և ձեռքով այգուց 20—25 քայլ հեռավորուլթյան վրա գտնվող կանաչագույն շենքը ցույց տվեց, ասլա, հաղիվ լսելի ձայնով՝

— Ամբարո՛ւմն են. . . — ավելացրեց:

Սարխանն իր ձեռքի մատուցերից յերեք զնդակ արձակեց. Բեթսուլի վիզը կախ ընկավ կրճքի վրա և մնաց անշարժ:

Յերեկոյան, վորոչված ժամանակից մի ժամ ուշ, պարտիզանական խումբը կովի ճակատն ուղեվորվեց: Այդ պահին մայր մտնող արեգակի սլ շողերն ելին պարում գյուղի վրա. . .

Ա Լ Ե Կ Ո Մ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

Սարխանը Բեյուքքեսիկ կայարանի պահակի տանից դուրս գալով՝ դեպի ցած գնաց: Յեղանակը գեղեցիկ էր, հաճելի: Սուճըն յերեկվա հարձակումից հետո կարմիր բանակի հրամանատարութեան թուլլովութեամբ յետ քաշվեց և յերկաթգծից բավականին հեռու, մայիսյան արևի տակ հանգստանում էր:

Ձիերի թամբերն իջեցրել՝ բաց էլին թողել արածելու համար: Յերկու հոգի պահակ էլին կանգնել միայն: Մնացյալներն առանց ծածկվելու պառկել քնել էլին:

Սարխանը դանդաղ քայլերով առաջացավ, քնած ընկերների մոտ գնաց: Աչքերը գետնին հառած՝ դուռնագեղ և մանր քարերին նայելով՝ քայլում էր նա: Այս դաշտերում բուսած թփերը, պապակ, անջուր և գորշ լեռնալանջերի վրա մազլցող վոլորապտույտ կածանները, անտառից հեռու աճած հատ-հատ կաղնի ծառերը, ամեն, ամեն բան նրան ծանոթ էլին թվում:

Այս վայրերը տեսնելով՝ Սարխանն իր մանկութունը հիշեց: Հեռուներում թագնված այդ կյանքը կարծես հանկարծ վոտքի յեղնելով՝ նրա աչքի առաջ կանգնեց, կենդանացավ:

Ամեն տարի, ամռան այտեղ էլին փոխադրվում նրանք: Յոթը տարեկան հասակին, իր հասակակիցների հետ, այս վայրերում տնակներ էր շինել, գունավոր քարերից փոքրիկ մինարեթի նման բաներ սարքելիս թոչունների բույներ էր վորոնել և ամբողջ օրն այտեղ անցկացրել: Սակայն իր մանկութեան օրերի վորոչ գեպքեր՝ տրամութեամբ նա վերհիշեց: Իրենց հարևան Յուչուի տղաները գրեթե ամեն օր Սարխանին նեղացնում, ծեծում, սարքած անակը փչացնում էլին և թոչունների բույներն իրենց իրավունքի տակն առնում. իսկ ինքն ու իր դժգոհ ընկերները՝ հեռվից պարսատիկներից քարեր տեղալով նրանց վրա՝ դեպի տուն էլին քշում նրանց: Այդ ավազակութունները զեկավարող տղային Սարխանն այնքան լավ էր հիշում այժմ, վոր մի պահ ինքն իրեն մանուկ կարծելով՝ ատամները կրճտացրեց և սրտանց «ա՛խ... Ծամսի» ասաց դայրու լթով:

Հեվալով, շտապելով յեկող Շիրալին նրա վերհիշումների ժապավենը խզեց:

— Սարխա՛ն, գիտե՞ս ինչ է պատահել, — ասաց ավելի մոտենալով:

Սարխանը գարմանքով յետ դարձավ, կուփի ձակատում դեռ վոչ մի դեպք չէր պատահել, դեռ վտանգ չկար: Բայց Շիրալու շրթունքները կապտել էլին:

— Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել, — զգույշ հարցրեց Սարխանը:

— Մենչևիկներն ինջալի ձորը գրավել են:

— Ո՞վ է ասում:

Քիչ առաջ՝ ներքևում տեսած մի մարդուց իմացա. նա ասաց, վոր գյուղը տակն ու վրայեն արել, աները կործանել, ձեռք ընկած գյուղացիներին ել գերի յեն վերցրել:

Սարխանն յերեսի գույնը գցեց: Իր բոլոր հույսերը կորցրած մարդու նման՝ խորը մտածմունքի մեջ ընկավ, «Ի՞նչ պետք է անել. ինչպես յերևում է, այդ շրջանի ուժերը քիչ են: Հասպա ինչո՞ւ մեզ չտեղեկացրին» մտածում եր նա:

— Շիրալի', սրա մասին վոչ վոքի բան չասես, հասկացա՞ր, — ասաց Սարխանը:

Հետո գրպանից ծխախոտի տուփը հանելով սկսեց ծխել: Մտքերի մեջ խորասուզված՝ կրկին աչքերն յերկնակամարին հառեց. հեռվից, կուր գետի վրայով դեպի հարավ յեկող ամպը մինչև Ավեյ լեռան գագաթն իջել՝ արևի դիմաց մի սևաթույր վարագույր եր քաշել: Յերկնքի յերեսը սև ամպերով ծածկվում եր: Լեռան գլխի միակ ծառը՝ անհայտ կտրալ աչքից:

Սարխանը մի քարի վրա նստեց և ծխախոտի կրակը թեժացրեց:

— Անձրև է գալիս, նկատո՞ւմ ես:

— Չե՛, կարկուտ է, — պատասխանեց Շիրալին, — են ել ես դաշտերի ցորենի հերն անիծող կարկուտ... միշտ ել ես յեղանակին թափվող կարկուտը գյուղացու բերքը տրորում է:

— Կարծես աստվածն ել մենչեիկների հետըն ե միացել, — ասաց Շիրալին կատակով:

Այժմ Սարխանը մի վճռական յեզրակացության եր հանգել: Մերթ ընդ մերթ յերկարքիթը վեր քաշելով՝ իր վիզը քերոզ և արագարագ քթթող աչքերն իրենից չբաժանող Շիրալուն նայելով ծխում եր:

Անհանգիստ եր: Նստած տեղից վեր կենացով՝ պարտիզանների մոտ եր ուզում գնալ:

— Դու գեռ վոչինչ չասես տղաներին, հասկացա՞ր, վախենում եմ անկարգություններ անեն կրկին:

— Լավ, լավ, հասկացա՛:

Սարխանը կողքից կախած տաս կրականոցը քաշեց և ողում կրակեց մի անգամ: Պարտիզանները զարթնեցին քնից:

— Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել, — հարցրին իրար նայելով զարմացած:

— Եստե՛ղ, եստե՛ղ...

Չորս կողմից շրջապատեցին Սարխանին:

— Չայն ծպտուն չհանեք, աղմուկ-աղաղակի յել պետք չկա, նստեք, քննելու անհրաժեշտ մի խնդիր կա, — ասելով՝ իրեն շրջապատողներին դիմեց խնդրական յեղանակով:

— Մի քանի բոպե առաջ մեզ տեղեկացրին, վոր թշնամին ինջալի ձորը պաշարելուց բացի, նույնիսկ գյուղը տակն ու վրայ յե արել: Իսկույն անհրաժեշտ ե նրանց ողնության գնալ: Ինչպե՞ս եք գտնում իմ այս առաջարկը:

Պարտիզաններն սկսեցին մտածել:

— Ինչո՞ւ համար եք մտածում: Յերևի կարծում եք, թե չի՞ կարելի Կուրն անցնել:

Նրանցից մեկն սկսեց խոսել.

— Ուղիղն ասած՝ յես դենն անցնելուն համաձայն չեմ, նրա համար...

Շիրալին ընդհատեց խոսողին:

— Քո համաձայնության մտիկ տվողն ո՞վ ե:

Սարխանն անհամաձայն ընկերոջ միտքը լրիվ հասկանալու համար՝

— Ա՛յ ընկեր, խոսի՛ր, — ասաց — դու ել սպասի՛ Շիրալի, տեսնենք ընկերն ի՞նչ է ասում:

— Վորովհետև մեզ վերեկից հրաման չի յեկել...

Մի ուրիշ պարտիզան ել խոսակցությանը խառնվեց.

— Կուրը վարարել է, հիմի անցկենալ չի կարելի... Ես բոպեյին մանավանդ նալ ել չունենք...

Սարխանը մյուս ընկերներին մտադրություններն իմանալու նպատակով՝ բոլորի վրա հարցական մի հայացք ձգեց:

— Ել ուրիշ խոսողներ չկա՞ն:

Շիրալին խոսք խնդրեց: Նախ՝ իրենից առաջ խոսողների յերեսը նայեց. մի բոպե քիթն ու բերանը ծռեց, ապա սկսեց խոսել.

— Ա՛յ յուղաշլա՛ր, ինձ լսե՛ք. ճիշտ է՝ հեղափոխության որենքը պահանջում է, վոր վերեկից յեկած հրամաններին հպատակվենք.

բայց, նկատի ունեցեք, վոր ես բոպեյին մենք խաղալու, քե՞ք անելու չենք դնում: Հեղափոխությունը մեր ձեռքից դնալուց հետո մեր անունն ել հեղափոխական չպետք է դնենք. մենք... Են մյուս ընկերն ասում է՝ Կուրը վարարել է: Կուրը վարարել է՝ թող վարարի, ինչ կա, ալելի լավ... մյուս աիկից նալ բերելը թող իմ պարտքը լինի... Ել ուրիշ ասելիք ունե՞ք:

Խմբի անդամներից վոչ մեկը չառարկեց այլևս:

— Իմ կարծիքով իսկույն մյուս ափը պետք է անցնել:

Պարտիզաններից մեկը քթի տակով մըրթմըրթաց.

— Կզնանք կատենենք, վոր կակաչը թառամել՝ իր տեղն է թողել միայն. մի հինգ-վեց մարդ ել զոհ տալուց հետո յես կզառանք սևերես:

Մեկ ուրիշը նրա մտքերն եր կրկնում նույնպես.

— Ա՛խ, մի դիտնայի, թե ինչո՞ւ համար պետք է դնանք:

Խմբում ձայներ բարձրացան դարձյալ: Վոմանք քնից նոր գարթնած մարդու նման աչքերը արորում եյին, վոմանք ել կողքը քերում: Մեկ ուրիշը փնթփնթում եր.

— Քաղցած փորով ո՞ւր գնանք...

Սարխանն աչքի տակով փնթփնթացող պարտիզանին նայեց և խիստ ձայնով ասաց.

— Կուշտ փորով կովէլը դժվար չէ. կուշտ փորով տատտ ել կկովի. Իգիթ նրան կասեմ, վոր քաղցած փորով դուրս կգա թշնամու դեմ:

— Գյուղը ձեռքից գնալուց հետո մեր ողնությունը քանի՞ կոպեկ արժի, — պատասխանեց անկյունում նստած մի պարտիզան:

Այս վիճարանության, չմասնակցող ու ցարդ լուռ նստած, կարճահասակ, մուսավաթականների որով պրիստավի ջոկատի զինվորներից վերք ստացած մի պողպատյա պարտիզան վիրավոր վրտքը յետ քաշելով բղավեց.

— Ընկերնե՛ր, մի մոռանաք, վոր յեթե գյուղը ձեռքից գնացել է, հեղափոխությունը ձեռքից չի դնացել:

Վիրավորված պարտիզանի խոսքը խմբի անդամների վրա մեծ ազդեցություն թողեց: Նրա կողքին նստած պարտիզաններից մինն էլ խոսք խնդրեց: Սարխանն իր աչակերտներին քննող ուսուցչի դերք ընդունելով՝ նրան ել ձայն տվեց:

— Մենք Սարխանին տղամարդու պես խոսք ենք տվել, վոր նրա առաջարկը գետին չպետք է գցենք: Իր խոսքն յետ վերցնողին Իգիթ ասելը հարամ է, հարամ: . . . — ասաց և սուր աչքերով իր շրջապարի ընկերներին նայեց:

Խմբում վճռական բեկում էր առաջացել քյլես: Այդ հանգամանքը նկատած Սարխանը բարձր ձայնով կանչեց.

— Մենք գնացի՛նք:

Ձեռքերը վեր բարձացան:

— Ուրեմն ձիերը թամբենք. . .

. . . Չանցած յերկու րոպե՝ խումբը Ղարաչաղի անտառների մեջտեղից անցնող ճանապարհով դեպի Կուր գետի ափերն էր արշավում քառատրոփ:

Յերկինքը մերթ հանգիստ էր, մերթ էլ ապանջ խլացնող ահավոր գոռոցներ էր արձակում: Լեռները, ձորերն այս յեղանակից ազդվող մարդու պես լուռ ու տխուր էյին թվում:

Ամռան արևը սև-մութ ամպերի յետևը թագնվել էր: Կուրը վարարում էր, սկսում էր արևկոծվել:

Ա Ղ Ջ Ի Կ Ն Ե Ր

Ինչո՞ւ համար պայքարի պատրաստ չեր Մահիրեն, ինչո՞ւ համար կռվի դաշտ մեկնող ոռւս աղջիկների նման գենք վերցնելով՝ Սարխանի հետ կողք-կողքի չպիտի կարողանար պայքարել: Ի՞նչ արած, վոր կին է ծնվել: Ինչո՞վ է նա պակաս տղամարդուց: Յեթե հարցը միայն հրացան արձակելու և ձի հեծնելու մեջն է, ապա ուրեմն այնքան էլ դժվար չեն դրանք:

Մահիրենն այժմ այս հարցերին պատասխաններ եր փնտռում: Ինչո՞ւ համար նա մայնկուծյունից ի վեր գետափի աղբյուրից կժով ջուր բերելուց բացի՝ ուրիշ ավելի հետաքրքիր և ոգտավետ աշխատանք չեր կատարել: Գուցե Մահիրենն աղբյուրից ջուր բերելու համար եր ստեղծվել միայն. գուցե ծնողները նրան ուսումի չեյին ուղում տալ, և իբրև այգպիսին էլ նկատի ունեյին:

Մահիրենն դոմի առջևից անցնող ճանապարհով ջրի գնալու պատրաստվելիս մտածում եր և ինքն իրեն ասում. «մենք էլ մեր անունն աղջիկ ենք դրել, ջուր կրելուց և հաց թխելուց բացի ուրիշ բան չգիտենք. տեսնես՝ մենք էլ մի անգամ արև որ տեսնելո՞ւ յենք, թե՛ չե՛»:

Տանից հանկարծ մոր ձայնը յեկավ.

— Ա՛յ աղջի, Մահիրե... կանգնել ո՞ւմն էս սպասում:

Մահիրենն վոտքի կանգնեց, հարևանի տունն շտապեց ուղիղ և ջուր բերելու պատրաստվող էրենց թաղի աղջիկներին միացավ: Քիչ առաջվա մտածածները կարծես մոռացել եր: Ճանապարհին նրան խոսեցնող չկար. ինքն էլ ընկերուհիներին վոչինչ չեր ասում: Միայն ինքնիրեն «ե՛հ,—ասում եր դժգոհելով,—աշխարհի դարդն ու ցավը ինձ չե՞ն տվել հո: Յեթե ծնողներս ունեոր լինեյին, յես էլ հիմի սեն ու սպիտակը իրարից ջոկել կկարողանայի: Աստվածն ինձ միայն ջրկիր է ստեղծեց»:

Աղջիկները՝ վերջին սրերի ընթացքում դյուզում չըջող լուրերի և դեպքերի մասին անտեղյակ չեյին: Նրանք էլ, իրենց հերթին, վերջին դեպքերի առթիվ իրենց կարծիքներն էյին աշխատում արտահայտել: Նրանցից մինը, չգիտես ինչու, խիստ դժգոհ եր յերևում: Չայնքն էլ՝ մյուսների համեմատությամբ բարձր եր հնչում:

— Աստված մեզ պատժեց. ասում էս բոլջիկները լավ մարդիկ են. աստված մեզ պատժեց: Վո՞րտեղից լավ են: Ել ի՞նչ փորձանք մնաց, վոր մեր գլխին չբերին: Մինչև բերանը լիք տանից վրեն նստելու մի խալիչա յել չմնաց, վոչխարի հոտը ցրիվ տվին... նախիրն էլ ձեռներիցս գնաց:

Մի ուրիշ աղջիկ հակաճառում եր նրան:

— Ընչի՞ եղպես ես խոսում, ա՛յ աղջիկ, հոտը ցրելով տալով ի՞նչ յեղալ: Քի՞չ կերաք, հերիք չե՞՞ բաս: Թողեք, վոր մեր բերանն ել մի բան ընկնի, աստված դե՞մ է դրան:

Մահիրենն այս խոսքերն արտասանող ազգական մոտեցավ:

— Թող հայհոյի, շունը հաչի—քարվանն անցկենա. մեզ համար եսպես լավ է,—ասաց շնջալով:

— Յուչու հերը քի՞չ խլեց սրանից—նրանից կերավ, հերիք չե՞... .

Յուչուի աղջիկը զայրացավ: Աղջիկները նրան գրգռել էին: Սակայն վերջին խոսքերը չեր լսել նա, դրա համար չպատասխանեց գրանց: Մահիրենն ընկերուհուն ավելի ջղայնացրեց.

— Ասածուն փառք. բուլչեիկները չքափորին ձեռք չդա՞ցրին, ընդհակառակը՝ անտուն, տկուր մարդկանց տավար, վոչխար տվին... .

Այդ բուլչեիկն Յուչուի աղջիկը խոսակցությանը խառնվեց:

— Շանվո՛րդի Սարխան. երեկվա մշակն ես որ յեկե՛լ բուրբի գլխին աղա յե դառել. ինչ—սխիսի հրաման—մրամաններ է տալիս, ասես չգիտենք թե ով է... .

Մահիրենն այս խոսքերին լուրթյամբ միայն պատասխանեց: Մյուս աղջիկները նույնպես արհամարհելով նրան՝ վոչինչ չպատասխանեցին: Յուչուի աղջիկը նկատելով նրանց վերաբերմունքը՝ բարձր ձայնով ավելացրեց.

— Ինչի՞ չե, ձեզ համար բուլչեիկները չա—հավոր են. մի ամիս է, վոր մարդու կարգ եք անցել. ձեզ շան տեղ դնող չկար՞ առաջ:

Մահիրենն պատասխանեց կրկին:

— Ա՛յ աղջիկ, բավական է... . մենք հանաք ենք անում քեզ հետ... .

Ապա գլուխը շրջեց և ընկերուհիներին նայելով ժպտաց ուրախ:

Մի աղջիկ Յուչուի աղջկան ցանկությամբ լի աչքերով եր նայում. նրա հագած նոր կոշիկները գրավել էին նրա ուշադրությունը:

— Մերյեմ, —ասում եր, —ինչ լա՛վ են չաքմաներդ, յե՞րբ ես առել, ա՛յ աղջիկ:

Այս խոսքերից հետո Մերյեմի յերեսին նայեց. ապա հայացքը շրջելով՝ նորից նրա կոշիկներին հառեց:

Մերյեմը քիչ առաջ իր վրա տեղացող մեղադրանքներից ազատվելու ցանկությամբ բռնված՝ ասաց.

— Թող մի քանիսի աչքերը դուրս գան, խոմ յես նրանց պես վոտարորիկ ման չպիտի գամ. դեռ ի՞նչ է յեղե՛լ, փա՛ռք ասածու, յեղբայրներս վողջ մնան:

— Ա՛յ աղջիկ, հապա ասում են յեղբայրներիդ սպանե՞լ են... .

— Քո յեղբայրը թող մեռնի, ինչի՞ իմ յեղբորը թաղում ես:

Մերյեմի խոսքերը լսելիս՝ աղջիկներն իրենց աչքերը նրան դարձրին: Մի քանի որ

սրանից առաջ, Սարխանն իր խմբի հետ կռվի
ճակատը մեկնելու առաջնության, գյուղում,
Յուզուբի տղաների գնդակահարության մասին
լուրեր ելին շրջում: Աղջիկներին զարմացնողը
հենց այդ լուրերն էին:

— Յեղբայրներդ վո՞ղջ են:

Մահիրեյի այս հարցից անչափ գայրացած
Մերյեմը բարձրաձայն ասաց.

— Շատ լավ էլ վո՞ղջ են. ուրուրի ճուտի
նման...

— Հապա ո՞ւր են:

— Տանը. սատկե՛ք, ջաններդ թող դո՛ւրս
դա...

Մահիրեն ձեռքի մատը կծեց: Իր մտքում՝
«ուրեմն փախել յեկել են», ասաց: Սակայն
Յուզուբի աղջիկը շարունակում էր.

— Ձեր ժամանակն էլ յերկար չի քաշի,
յերեք-չորս օրից հետո ձեր գլխին շան ոյին է
գալու. են վախտը կտեսնենք ձեր հալը...

Մերյեմի սպառնալի խոսքերը լսելիս՝ Մա-
հիրեն կես ժամ առաջ, դոմի կողքին կանգնած
պահին իր մտածածները վերհիշեց:

«Մի կոպեկ էլ չարժեմ յես», ասելով ինքն
իրեն մեղադրել սկսեց նա կրկին.

— Այ աղջի, Մերյե՛մ, ինչի՞ յեն յեկել.
լավ վոր չեն վախենում, — հարցրեց կրկին աղ-
ջիկներից մեկը:

— Ինչի՞ց պիտի վախենան. Շամսին չե՞ս
ճանաչի: Մի բանակ զօրքի դեմ կկանգնի, նրա
զոչադությունը բոլորին հայտնի յե:

Աղջիկները կժերը լցնելով՝ տուն դառնա-
լու պատրաստվեցին: Նրանք դարձյալ նույն
հարցերին ելին վերադարձել, խոսում, վիճում
էլին ճանապարհին: Մահիրեն միայն քիչ ա-
վելի մտառանջ էր յերևում...

Ժ Ո Ղ Ո Վ Բ Դ Ի Ն Ե Ր Ո Ս Ը

Շամսին խիստ զբաղված էր: Քաղաքից վերադառնալու ուրվանից վոչ մի տեղ չէր գնում, այլ մի քանի կասկածելի մարդկանց իր մոտ կանչելով՝ նրանց խիստ և կարևոր հրահանգներ էր տվել: Իսկ այսօր ճամբա յեր ընկել ինքը: Փոքր յեղբոր արու ձին հեծած՝ դեպի հարևան գյուղն էր ուղևորվում: Մտածկոտ էր շատ, քիչ էլ հոսեատես: Այժմ պարտավածների շարքն անցնելն իրեն համար մեծ ստորություն էր համարում նա. մի ամիս սրանից առաջ կարգին պաշտոններ վարող Շամսին՝ այս բուսակն իր հակառակորդ Սարխանի հրահանի տակն էր գտնվում: Պարզ էր, վոր Սարխանը թույլ չէր տա, վորպեսզի Շամսին իրենց գյուղում, գավառում առաջվա նման աղավաքի ապրի: Այս մասին Շամսին էլ շատ լավ գիտեր անշուշտ: Նրան ամենից ավելի մտատանջողն ու սրտմաշողն այդ հարցն էր: Յեվ դեռի հրամանատարի պաշտոնն ստանձնած և խյղ պաշտոնը վարած ժամանակաշրջանի կենդանի հիշատակները, այդ ամենից թանգ, այդ դեղեցիկ որերը, նրա յերևակայության կտավից չէին ջնջվում: Այդ որերը վերհիշելիս Շամսին սիրան ավելի քան ճմրվում էր: Նա կարծես

էր պաշտոնից զրկվելու առթիվ այնքան էլ չէր ցավում: Մի բան ամենից ավելի ճնշում էր նրան սակայն, — դեռի հրամանատարի պաշտոնի կատարման անցած բուսակն՝ ռազմական մինիստրի իրեն տված պատվերը, հանձնարարությունը չէր կարողացել կատարել նա: Շամսին ամբողջ եյությամբ ցնցվեց: — «Թուրք ժողովրդի դրոշակը միշտ բարձր պետք է պահել», պատվիրել էր մինիստրը նրան: Ապա ձեռքը կռնակին խփելով՝ «տղաս, հայրենիքը քեզ նման քաջ մարդկանց ուսերով վեր կբարձրանա» չե՞ր ասել միթե: Իսկ Շամսին՝ Շամխորում ծայր տված հակահեղափոխության պարտությունից հետո՝ թրջված հավի նման և առանց ամաչելու իր հայրենի գյուղը չե՞ր փախել արդյոք: Յեվ ինչո՞ւ չի հասկանում հիմա, վոր ապրելու իրավունքը կորցրել էր նա արդեն: Յեվ ինչո՞ւ համար էր ապրում այժմ: Շամսին ինքն իրեն նախատում էր, նույնիսկ յերբեմն «սա խայտառակություն է» ասելով՝ նրան իրենց վրտների տակը ջարդող, ճզմող, իր փառքը, իր անունն ստորացնող այս քաղցած և մերկ մարդկանց յերկրից գլուխըն առնել փախչել էր ցանկանում: Սակայն նման մտքերի վրա այնքան էլ չկենտրոնանալով՝ ավելի լավ ճամբա, ավելի հարմար յելք էր փնտռում — «Այս հողը թշնամուն հանձնելուց հետո ո՞ւր պետք է դնամ յես, սա յել յուրատեսակ խայտառակություն չե՞ միթե», — խորհում էր:

Այսպես, անընդհատ մտածելով՝ յերբեմն միայն խթանում եր ձին, վորից հետո շարունակում եր դարձյալ իր հիշողություններն հետապնդել ուժգնորեն: Մտաբերելով մուսավաթական դառնալու իր առաջին որերը՝ ասիլի քան ջղայնանում եր նա: «Գոնե, ասում եր, կուսակցության մեջ մտած չլինեյի. յեթե այդպես վարվեյի, գուցե յես ել հիմա շատերի նման բոլորի աչքից չընկնեյի: Իզուր չե, վոր այս բոպեյին Մեհմեդ Եմին Բեսուլ-Չաղեյի կուսակցության պատկանող մարդկանց շան տեղ դնողը չկա:

Շամսին մինչև 19 տարեկան հասակը վոչ մի քաղաքական կազմակերպության չպատկանող յերիտասարդ մի սպա յեր: Վերջը հնարավոր չեղավ չեզոքությունը պահպանել: Յերբ գնդի հրամանատարի պարտականություններն ստանձնեց՝ չեզոքությունը մեկ կողմ դնելով՝ իսկական կուսակցական դարձավ:

Այդ որերին մուսավաթական կուսակցության դավառային կոմիտեն վաճառական Աղավերդու խանութումն եր տեղավորված: Պատճառը կուսակցության աշխատանքներն արժեքավորելու անհրաժեշտությունն եր: Մուսավաթական կուսակցության գլխավոր քարտուղարն Աղավերդին եր, իսկ Աղավերդին՝ խանութի գործերը բաց թողած, միայն կուսակցության գործերով զբաղվելու հնարավորությունն չուներ... Բացի դրանից՝ կու-

սակցությունն ու առևտուրը իրար հակադրելու կողմնակից չեր նա: Նրա գլխավոր նպատակն եր նաև այդ յերկու աշխատանքները մի հայտարարի բերել, համաձայնության մի գեղեցիկ ուղի գծել: Կուսակցական գործերով խանութը մանողներին իր ապրանքների մասին տեղեկություններ եր հաղորդում, հաճախորդներին ել, փոխադարձաբար, մուսավաթական կուսակցության վերաբերյալ անհրաժեշտ բացատրություններ եր տալիս: Աղավերդին իրենց կուսակցության անդամների շրջանում մեծ հարգանք եր վայելում, վորովհետև նման «ծանր» աշխատանքների յեր լծվել նա: Քաղաքում ապրող կուսակցական բոլոր անդամները նրա կարծիքն եյին հարցնում: Հարմար առիթը պատահելիս՝

— Մաչաղե'ց, Աղավերդին լա'վ աշխատող ե, կուսակցության համար ջանն ել չի խնայի, — ասում եյին:

Աղավերդին, վորպես գլխավոր խմբագիր, իրենց պատի թերթը միշտ ել իր խանութի դռնիցն եր կախում: Այս թերթը, գլխավոր բաժիններից զատ՝ «հայտարարության» և «գրույցի» սյունակներ ուներ: Մանութի առջևից անցնող և ակամա հայացքն աքլորանկար թաչկինակներին հողողները թաչկինակներից ներքև փակցրած, հետո շան շղթաների, ապա վարտիքի կապերի նման խառն ու այլազան բաներով շրջապատված պատի թերթն եյին տեսնում նույնպես: Քիչ թե շատ ուշադիր դի-

ատղը թերթի կենտրոնական սյունակներում գետեղված հետևյալ հայտարարություններն եր կարդում... —

«Վերջերս պարսկական լավ խինա յենք գնել: Ստանալու համար դիմել Աղամկերզու վաճառատունը»:

«Գյուղացի՛ յեղբայրներ, ձեզ անհրաժեշտ ամեն տեսակի ապրանք ճարվում է մեզ մոտ. ապրանքը ծախում ենք մատչելի գներով: Վստահելի մարդկանց՝ ապառիկ ել կարելի յե: Ապրանքը տե՛ս, հավանի՛ր, փորձի՛ր, հետո գնիր»:

Թերթի ներքևի սյունակում, մեծ—մեծ տառերով գրված այլ ուշագրավ հայտարարություններ ել կային.—

«Ուրբաթ որը, մեծապատիվ Հյուսեյին բեգի տանը կկայանա կուսակցության հերթական նիստը:

Բոլոր անդամների ներկայությունը ցանկալի յե: Հավաքույթի ընթացքում մեծարգո Ալի բեգի յեղորդ վորդին՝ մեծապատիվ Չաման աղան կղեկուցի «Մահ—ժառ մարգարեյի ազդեցությունը արևմտյան դիտահանների վրա» նյութի մասին: Մեծապատիվ Միր—ձիթթահ աղայի ներկայությունը խիստ ցանկալի յե»:

Շամսին այս դեպքերն իրենց ամբողջ ման—բամասնություններով հիշում եր: Իր կուսակցական անգամագրությունը նույնպես Աղամկերզու խանութումն եր ձեակերպվել: Սկզբում կուսակցական գործերին այնքան ուշագրություն չեր դարձնում նա, սակայն մի քանի անգամ ժողովներին և հավաքույթներին մասնակցելուց հետո, դրությունը կամաց—կամաց

փոխվեց: Շուտով նա հասկացավ, վոր կուսակցական աշխատանքն իր սեփական շահերին ծառայացնելու լավագույն միջոցներից մեկն է: Հենց դրա համար ել իր ամբողջ եյությամբ այդ աշխատանքներին նվիրվեց:

Այս դեպքերի հիշողությանն անձնատուր յեղած Շամսին հանկարծ նկատեց, վոր գյուղն է հասել:

Նա իր ձին գյուղի ուղիղ մեջտեղից անցնող ճանապարհով դեպի հորը վաղեմի բարեկամ Շահրիար բեյի տունը քշեց:

Բարեկամները մեծ հրճվանքով դիմավորեցին նրան: Իեյի/ճառան ձին իսկույն ախոտարավ: Շամսին հյուրասենյակն առաջնորդեցին: Շահրիար բեյը նրան տեսնելիս իսկույն գրկեց, համբուրեց և հոր մահվան առթիվ իր անկեղծ վիշտն ու ցավակցությունը հայտնելից հետո՝ աշխուժ խոսակցության անցավ:

— Ինչպե՞ս պատահեց, վոր եղպես անվտանգ մինչև գյուղը հասար, — հարցրեց Շահրիար բեյը:

Շամսին լեռան ճամբով եր յեկել, դրա համար ել սահմանը հեշտությամբ եր անցել: Ճանապարհին վոչ բուշեիկյան և վոչ ել վրաց մենչեիկյան զորքին եր հանդիպել: Այսոր կրովի ճակատից հրազենի ձայներ ել չեյին լսվում: Ասում եյին, վոր այս յերեկոյան հարձակումներն սկսվելու յեն: Շամսին՝ բեյի հարցումներին պատասխանելուց հետո, հայտնեց, վոր

ինքը նույնպես խիստ վտանգավոր գրության մեջ է գտնվում :

—Յես,—ասաց,—այս բոպեյին վոչ նրանց կողմն եմ և վոչ ել սրանց, վորովհետև խորհրդային իշխանությունն ինձ մի որ ել վողջ չի թողնի: Ձեր իշխանությունից դեռ անձնագիր չեմ ստացել նույնպես:

Շահրիար բեյն այս պատասխանից դո՛հ եք կարծես: Ապա ուրախացած՝

— Անձնագիրն ի՞նչ է, բա՛նն ինչ է,— ասաց: Այժմ վորդին հորը չի ճանաչում: Սիրելիս, ի՞նչ ես կորցրել, ի՞նչ ես փնտռում:

Շամսին առանց ժամանակ կորցնելու՝ իր սիրտն սկսեց բաց անել.

— Այս բոպեյիս խորհրդային իշխանությունը շատ վատ գրության մեջ է գտնվում: Ինչ անելու չենք—հիմա պետք է անենք. մեր կողմերում գյուղն անտեր է դեռ. այս բոպեյիս վոչ վոք չկա: Ով ուժեղ է—իշխանությունն ել նրա ձեռքին է գտնվում:

Շահրիար բեյը հարգանքով նրա խոսքը կտրեց.

— Բայց մյուս կողմն անցնեյն անհնարին է. այժմ անչափ զորքի պատճառով շարժվելու հնարավորություն չունենք:

— Ձե՛, այդ շատ հեշտ է: Իմ յեկած ճապարհով կգնանք: Դար ու փոսից ի՞նչ վնաս:

— Ա՛յ աղջիկ, չայ բեր:

Շամսին մի փոքր լռությունից հետո շարունակեց.

— Յես կարծում եմ, վոր հենց այս գիշեր դյուղը պետք է պաշարել. մինչև առավոտ ո՞վ գիտե թե ինչ կպատահի. ասածու գործը հեշտ չե խմանալ: Ծնած որից յես ես աշխարհի գործերին տեղյակ եմ. շատ լավ են ասել, թե մի ձեռքը ծափ չի տա: Յենթադրենք, թե յես կբախ դարձա. կարող ե՞մ աշխարհը վառել...

— Եդ ճիշտ է, բայց յեթե միանգամից և առանց պատրաստվելու գնանք, մի բան չենք կարող անել:

— Ճիշտն ասած,—նրա խոսքը կտրելով է ցած ձայնով շարունակեց Շամսին,—մինչև առավոտը մի մասը դոնե կարելի չե գրավել: Տեսնո՞ւմ ես նրանց. դոնե մեր թշնամիներից սովորենք...

Շահրիար բեյի ծառան ձեռքին բռնած մատուցարանից յերկու բաժակ թեյ, կարագ, հաց և ուրիշ ուտելիքները մեջտեղը դրեց, հետո արագ դուրս գնաց:

Շահրիար բեյը մտածում եր: Նա վոչ մի բանից չեր վախենում: Բայց այդքան զինված մարդ ճարելը դժվար եր: Մի որ առաջ մենչևիկներն ել յեկան և դյուղի յերիտասարդությունը յարան: Մնացել եյին ուրեմն զենք վերցնելու ընդունակ մի քանի բեյ և հինգ—վեց հոգի զոչուն. մնացյալների վրա հույս դնելը դժվար եր: Այսքան քիչ մարդկանցով ի՞նչ գործ կարելի յեր տեսնել:

— Յես վոչ մի բանից վախ չունեմ,—ասելով Շահրիար բեյը մատուցարանը Շամսի

առաջը քաշեց, — բայց մի բան կա: Մեր տղա-
մարդիկը քիչ են: Քիչ հոգով ձյունը չի ձեղք-
վի: Հիմի չգիտեմ, թե ինչպես գործը գլուխ
բերենք:

Շամսին առաջվանից պլանները պատրաս-
տած մարդու նման իսկույն պատասխանեց.

— Գիտեմ, վոր քիչ են, սակայն մենք
պետք է գտնե՛նք և շատացնենք: Քսանից յե-
րեսուն մարդ ել մեր գյուղից կարելի յե բե-
րել: Հիսուն—վաթսուն մարդ ել յեթե ճարելու
լինենք՝ մի վաշտ կկազմենք: Սկզբում կլցվենք
գյուղից, իշխանություն կհաստատենք, ապա
կանցնենք ուրի՛շ գյուղեր: Գիտե՛ս ինչքան շատ
են խորհրդային իշխանության ձեռքից արյուն
արցունք լացողները... հետզհետե մեր ուժը
կավելանա... .

Շահրիար բեյը՝

— Համաձա՛յն եմ, — ասաց, — ամեն գործի
սկիզբը եսպես է: Յես ուզում եմ ասել՝ մի քիչ
դպույշ լինենք... .

— Մեկ ել, — շարունակեց Շամսին, — ես
գյուղացիներից կազմած լոթի—փոթի խմբերն
ինչ են, յես դրանց չեմ հավանում, անունն ել
«կարմիր պարտիզան» են դրել. հողը դրանց
գլխին: Գրինֆելդիցի մեր բարեկամ Բեթսուլդի՝
գիտե՞ս: Այդ մարդը դրանց բոլորին հարբեց-
րել է, զենքերը ձեռներից խլելով՝ բաժանել է
մերօնց: Այդտեղից նույնպես հիսուն—վաթ-
սուն մարդ մեզ ոգնության կհասնեն: Սրանից

ավելի ի՞նչ ուժ ես ուզում: Սընըք Քյոփբուն
վառեցինք, դրանից մի բան դուրս չեկա՞վ:
Բայց Բեթսուլդը կարգին գործ տեսա՞վ:

Շամսին իր առջև դրված բաժակը վերց-
նելով մի անգամ ֆուսքրեց և ցած դրեց:

— Այդ որվանից հետո յես դրան չեմ տե-
սել: գյուղը հասած լուրերի համաձայն, Սար-
խանը, դրան գիտե՞ս, մեզ մոտ սրա նմաննե-
րին անհավատ ենք ասում, յեկել տեսել է, վոր
իբր ընկերները բոլորն ել հարբած են: Բոլորին
ել կարանքի տակ է առել. մի քանի հոգու ել
զնդակահարել:

— Ա՛յ մարդ, ի՞նչ ես ասում... հա՛, հա՛,
հա՛... .

— Իհարկե կծիծաղես, ծիծաղելի գործը
ծիծաղ է առաջացնում: Հիմա նրա գլխին են-
պիսի մի շան ոչին բերեմ, վոր իր անունն ել հի-
շել չկարողանա:

Սակայն նկատի ունենալով, վոր ժամա-
նակը կարճ է, Շամսին աշխատեց խոսակցու-
թյունը վերջացնել և մի յեզրակացության
հանգել: Իսկ Շահրիար բեյը նրան վորոշ պա-
տասխան չեր տվել դեռ: Կարծես դեռ նոր եր
տասխան համաձայնել. բայց Շամսիի տված
տեղեկություններից հետո՝ կամաց—կամաց
միտքը փոխեց... .

— Յեթե եղպես է, տղաներին կանչեմ
զան, տեքնենք նրանք ինչ կասեն: Ա՛յ աղջի,
Ֆիրուղե, Շամիլին եստեղ կանչիր:

Շահրիար բեյը ծառային վորոշ մարդկանց

յետեկից ուղարկելով՝ պատվիրեց նաև, վոր իբր ձին թամբեն: Ինքն ել մեկնելու պատրաստություններ եր տեսնում:

— Յես գիտեմ, քո կռիվը վաղ թե ուշ մեզ համար ել կա: Յեթե տիֆը մեջտեղից չվերացնես, հաջորդ որը քեզ ել կվարակի: Փոխանակ վաղը մեռնելու՝ թող ես որ մեռնեմ. ի՞նչ տարբերություն... Մեր մենչևելիները կտրիճ դուրս յեկան: Տղամարդը դրա՛նք են: Ադրբեջանը կնկա նման իսկույն հանձնվեց...

Հրավիրյալները մի առ մի ներս մտնելով իրենց անձանոթ հյուրին ներկայացան: Ծահրիար բեյը Ծամսիին նորեկների հետ ծանոթացնելուց հետո յուրաքանչյուրին ել նստելու հրավեր վարդաց ձեռքի շարժումներով: Երանցից մեկը յերկար չիբուխով ծխամորճը քաշելով՝ սենյակը մշուշով լցնում եր: Ծխելիս քթի միջով խոսում. հենց այսոր գյուղից անցնող զորքի մասին եր պատմում նա.

— Ասես Թիֆլիսում ել զորք չմնաց. ասում են՝ շուտով կամ ես կողմը կլինի, կամ՝ են... Ծատ մարդ գնաց. շիտում կարգացողն ել գնաց... (յունկերներին եր ակնարկում):

Ծահրիար բեյը խոսքի ուղղությունը շտապով փոխեց:

— Մենակ մենք ենք, վոր թեվերը ծախլնատել ենք: Կարծես ես կռիվները մեզ համար չչինեն: Ժողովրդին թալանեցին, մալ-տավար չթողին, վոչխար չմնաց... Չգիտեմ, նստած ո՞ւմ ենք սպասում:

Ծխամորճը քաշողը ներկա իրադարձություններից անտեղյակ մարդու նման հարց տվեց հանկարծ.

— Ի՞նչ ե պատահել, ա՛յ բեյ, տրամադրությունդ ինչի՞ յես փչացրել:

— Դեռ հարցնում ես, հա՛: Ա՛յ մարդ, եզուց բուլչևիկն եստեղ ել ե գալու, եստե՛ղ. խելքի ընկա՞ր: Ես մարդու հերը մեր ույեզլի առաջին ունեորն եր. հիմի դրա ի՞նչն ե մնացել. վաղը յեթե բուլչևիկի վոտն եստեղ կպչի, մեր գլխին ել են ոյլինը չե՞ն բերի դրանք:

Մոտիկ նստած՝ չերքեզկան հազին մի յերխտասարդ խոսակցության մեջ մտավ նույնպես:

— Հիմի ձեր մտքումն ի՞նչ կա:

— Ինչպես թե ձեր մտքումն ինչ կա: Ասա տեսնեմ, վաղը քաղցած շան պես սատկելը լա՞վ ե, թե՞ կուվելիս թշնամու աչքերի առաջ...

— Իհարկե կուվելիս...

Ծահրիար բեյի տան խորհրդակցության մասնակցողները բոլորն ել այս կարծիքն ունեյին: Այդ հարցի մասին խոսելիս՝ չերքեզկա հազած յերխտասարդը նույն կարծիքին առաջին ձայն տվողներից միինն յեղավ:

— Եղպե՛ս ասա, ե՛. տանը նստած ձեռները ծոցը դնելուց ի՞նչ ոգուտ:

Ծահրիար բեյը ծառային հանձնարարեց ձիերը պատրաստել:

— Հրացանս կյուղես, դաշույնս ել կպատրաստես, հասկացա՞ր:

— Գլխի՛ս վրա, աղա՛:

Հետո հյուրերին դառնալով՝ շարունակեց խոսքը.

— Վստահելի մարդիկ թող դան, ով սըրտով չի գալիս՝ թող հիմակվանից մեր ձեռքն ու վոտը չկապի. դե՛հ, վե՛ր կացեք, պատրաստվեցեք, քսան ըոպեյից հետո ճանապարհ ենք ընկնելու: Ուշադիր յեղեք նույնպես:

Շամսին, ներկա դրուժյունը տեսնելով՝ ճանապարհին ինքն իր դեմ ուղղած նախատելի խոսքերը կամաց-կամաց ջնջել սկսեց. «Իսկ յես՝ հայրենիքը ուսերովս բարձրացնելու համար դեպի մահը կդիմեմ»:

Կ Ե Ս Գ Ի Շ Ե Բ

Մինչև կես գիշեր Սարխանը չեր քնել: Հերթապահ պահակին ուչք դարձնելով շարունակ՝ մի քանի պատվերներ տվեց: Քիչ հետո պահակին փոխեց, և, խմրի հանգստավայր հանդիսացող փոսի ուղղությամբ մի քանի քայլ առաջանալով՝ Խրամ գետի ափին նստեց: Հողնել եր նա: Ուղեց մի փոքր հանգստանալ: Սակայն գետի խզված ձայնը նրա ուղեղում մըջյունի նման չըջում եր շարունակ: Գլխարկը հանեց. ծանր-ծանր շնչելով՝ գլուխը քերեց: Խիստ մտացրիվ եր: Անքնությունից աչքերը կսկծում եյին թեև, բայց ինքնիրեն—«չի կարելի քնել, մինչև լույսը պետք ե հսկել», ասելով մերթ ընդ մերթ խմրի հանգստավայրը հանդիսացող փոսին եր նայում:

Գյուղը չեր յերևում. մութն եր չորս բոլորը. բոլորը քնել եյին. մի քանի գույսեր միայն ազոտ չողում եյին դեռ: Հափանաբար նրանց աչքերից նույնպես քունը խույս եր տալիս:

Հանկարծ Մահիրեյին հիշեց նա: Իր սրտի խորքում մի ցավ զգաց. չզիտես ինչո՛ւ, Մահիրեյին տեսնել, նրան իր ամուր թևերի մեջն առած պինդ պինդ սեղմել ցանկացա՛վ: Այդ

ցանկութիւնը, այդ կարօտը գնալով շատանում, ծանրանում էր, նրա ուղեղը ճնշում:

Խմբից մի ձայն կանչեց նրան:—Ա.կանչ դրեց:—Սուլի' չն էր:—Իրեն էյին կանչում:—Ո՞վ է կանչում, ինչո՞ւ համար:—Ինչո՞ւ նրանք՝ հանգստացողները չեն թողնում, վոր ինքն էլ մի յերկու րոպե հանգստանա, մտածի իր մասին:

Գուցե սա՞ էլ հեղափոխութեան պահանջներ:

Նստած տեղից արագ վեր կացավ նա:

Սարխանին կանչող անձնավորութիւնը ձին առաջ քշեց:

— Դո՞ւք եք Սարխանը:

— Այո՛:

— Գաղտնի հրաման եմ բերել ձեզ:

— Վո՞րտեղից:

— Շտաբից:

—

Աչքերը ձիավորի յերեսին հռեց Սարխանը:

— Հրաման կա:

Չիավորը ծոցի գրպանից մատիտագիր մի հասարակ թուղթ դուրս հանեց: Շտաբի պետը գրում էր.

«Առաւոտյան ժամը 6-ին ձեր խումբն Ա.վեյ լեռան լանջերով դեպի Բորչալու պետք է շարժվի: Հիմակվանից յերեք որվա պաշար պետք է ձեռք բերել»:

— Իսկ պաշարը, վորտեղի՞ց ճարենք հիմի:

— Դա ձեր գործն է:

Չիավորը վերադարձավ:

Սարխանը մտքերով տարվեց. «Առավոտվա ժամի 6-ին, ուրեմն՝ որը բացվելուն պես»:

Սկզբում քնած ընկերներին ուղեց ձայն տալ: Բայց հոգնել էյին նրանք. առավոտը մոտ չէր նույնպես, ժամանակ շատ կար:

Դեպի պահակը քայլեց: Նա քնած չէր. «արգելված է քնել»:

Սարխանը պահակին նայեց: Հրացանը կողքին էր պահել, մատներն իրար մեջ անցկացրած:

— Լույսը բացվելուն պես՝ մի անգամ կկրակես, հասկացա՞ր:

— Լավ . . .

Ամպերի արանքից լուսնյակը դուրս պլլրծավ: Խմբից՝ մերթ ընդ մերթ վոմանց խորմփոցն էր լսվում միայն: Աջ կողմում, իր հին շինելում փաթաթված, քնեչէր Շիրալին:

Սարխանը քթի տակին խոսում էր.

— Յերեք որվա պաշար է պետք, վորտեղի՞ց ճարենք:

Հերթապահ տղային թվաց, վոր հարցումն իրեն, է ուղղում Սարխանը. ականջի տակը քերեց, հետո աչքերը վեր բարձրացնելով՝ պատասխանեց.

— Պաշար է պետք, առանց պաշարի հնարավոր չե՞ կուվել:

— Վո՛չ, հնարավոր չե՛ս սրանք մարդիկ
են, մարդը պետք է ուտի:

— Բայց դու ի՞նչ գիտես, — հարցնելով՝
Սարխանն ավելի մոտիկցավ նրան:

— Յես չգիտեմ, դրա մասին ինքդ գի-
տես...

Դեպի Շիրալուի պառկած տեղն շտապեց
նա:

Սարխանն անձամբ գյուղը գնալու հնա-
րավորությունն չուներ: Իսկ յեթե գնալու լի-
ներ, վորպես տեղակալ Շիրալուն նկատի ուներ
ի հարկե, սակայն խումբը նրա հույսին թողնել
չէր ուզում:

Մտածելիս՝ իր աջ ձեռքով Շիրալուն
բռնցքահարեց:

— Վե՛ր կաց... վե՛ր, ժամանակն անց-
նում է, — ասաց:

— Ինչի՞ չես թողնի մի քիչ քնենք:

— Այլևս քնել չի կարելի, վեր կաց, հետո
կքնես, տեղդ հանգիստ չե:

Շիրալին վշտացավ: Դժկամակելով բարձ-
րացավ և նայեց:

— Ինձնից ի՞նչ ես ուզում, աչքդ դո՞ւրս
կգա, վոր թողնես քիչ հանգստանամ:

Սարխանն իր դրպանից կտրած ծայրով
մատիտ և ճմռթկած թղթերի արանքից կի-
սամաչ մի թղթի կտոր ճարելով՝ չոր տեղ
նստեց: Շիրալին աչքերը ցեխոտ ձեռներով
տրորեց, քթի տակով մրթմոթաց և տակե-
տակ Սարխանին նայեց:

— Ի՞նչ ես ասում:

Սարխանը վոչինչ չպատասխանեց: Ձեռքի
մատիտով լուսնի լույսի տակ գրոտում էր:
Նամակը գյուղի հեղկոմ՝ իր տեղը նշանակած
Դարբին Մուսային էր ուղղում: Թուղթն յեր-
կու անգամ ծալեց:

— Մուսային կհանձնես, յերկու ժամից
հետո ամեն ինչ պատրաստ պետք է լինի ես-
տեղ, լսեցի՞ր:

— Գյո՛ւղը պիտի գնամ:

— Այո:

— Կես գիշերին ո՞ւմ կարելի յե ճարեց:

— Գնա քնից վեր հանիր...

— Իսկ ի՞նչ կլինի, յեթե առավոտյան
գնամ... Ախր հիմա դժվար է գետն անցնել:

Սարխանը շուղեց լսել: Քիթն ու բերանը
խառնեց թթվեց: Սկզբում ուզում էր հայ-
հոյել: Սակայն շուտով մտադրությունը փո-
խեց:

— Կարելի յե, ի՞նչ կա վոր:

— Սարխան, ախր կես գիշերին գետից
դժվար է անցկենալ, ցուրտ է, մարդու հերը
կանխելի...

Ժամանակն անցնում էր: Շիրալին վիճա-
բանություն էր բաց արել: Իսկ Սարխանն այդ
րոպեյին վիճարանելու առիթ չէր ուզում
տալ...

— Հիմի խոսքը կարճ կապենք, գնո՞ւմ ես
թե վոչ:

— Սարխան, ախր ես ցրտին գետից անհնարին ե անցնել: Գիշեր ե:

— Գիշեր ե, բայց շունակն արևի պես փայլում ե, ցուրտ ե, բայց դու ջրից դուրս գալուն պես արագ կփազես, են ժամանակ կտաքանաս՝ կդառնաս կրակ: Վե՞րջը:

— Սրա վերջն ո՞ւր ե վոր...

— Ուրեմն հայդա՛, շո՛ւտ...

Շիրալին գլուխը շիեց ամուր: Շարվարը ցած եր ընկնում: Յերկու ձեռներով շարվարը վեր բարձրացրեց: Նրա ստամոքսը դատարկ եր, դրա համար ել շարվարն իր առաջվա տեղը հազիվ անցկացրեց:

— Ե՛յ, մի՛ սպասի,— ասաց Սարխանը և վճռական հայացքով նրան նայեց,— ինչո՞ւ ես կանգնել:

Հեռվից մի ձայն լսվեց հանկարծ:

Սարխանն ահանջները տնկեց: Աչքերը չորս կողմը դարձրեց: Այրած կամուրջի կողմը նայեց նույնպես: Վոչ վոք չեք յերևում: Կնոջ ձայնի յեր նման: Բայց գիշերվա կիսին ո՞վ կարող եր լինել... Չայնն այլևս չլսվեց:

Սարխանը ձեռքի թուղթը բանալով կարդաց, վերջը՝ դեռ յերկմիտ Շիրալուն նայեց:

— Չայնը չլսեցի՞ր:

— Լսեցի:

— Ո՞վ կարող ե լինել:

Նա ուսերը ցնցեց:

— Յերևի աղջիկ են փախցնում:

— Չահանդա՛մ: Ես թղթում գրեկ եմ, վոր

Յուշուի վոչխարներից մի յերկուսը մորթի և մեզ ուղարկի: Հացը դեռ մեզ մոտ ճարվում ե, գլխի ընկա՞ր:

— Դու եղ Յուշուից ի՞նչ ես ուզում: Թող քիչ ել իրեն մնա, յա՛վ թալանվեց, հա՛... Սարխանը քիչ բարկացավ: Դառնացած և տխուր Շիրալուն նայեց:

— Եղ քո գործը չի. գնա՛, ամեն բան իմ ասածի պես արա, վերջացավ գնաց:

Նախորդ ձայնը՝ ավելի մոտիկ մի վայրից և ավելի բարձր՝ դարձյալ լսվեց: «Սարխա՛ն, Սարխա՛ն...»:

Սարխանը վեր կացավ իսկույն, ուղիղ կանգնեց: Ո՞վ կարող եր լինել:

Չեք ճանաչում: Նրա ձայնը քաշվել եր տեսես, խզվել: Ի՞նչ ել տղամարդու ձայնի նման եր:

— Դու մեկնիր, ժամանակը մեզ չի սպասի,— վերջին անգամ լինելով առաջարկեց Շիրալուն:

Շիրալին, գուցե դժգոհ, բայց մեկնեց: Հինգ րոպեյից հետո աչքից կորավ նա:

Լուսնի յերեսին ամռան ամպերը ման եյին դալն... Բայց այդ ձայնը չկրկնվեց այլևս: Վախը Սարխանին պատել եր: Ինքն իրեն— «կարծես կնոջ ձայնի յեր նման»— ասելով՝ մտածել սկսեց:

Մտքերը տանո՞ւմ եյին նրան: Ինքնիրեն սթափվելով՝ չթնները պինդ կծեց:— Ո՞ւր եր վերադառնում նա հիմա. ծնողներն ուզում

եյին յե՞տ տանել նրան: Վո՛չ. այժմ հրաշք-
ների մասին մտածելու ժամանակը չէ:

Չային իր վերջին ուժերը հավաքելով,
դարձյալ կանչեց. «Սարխա՛ն, Սարխա՛ն...»:

Չէ, մարդ արարածի ձայն եր այդ: Յե՛վ,
մինչև անգամ իր սրտին մոտիկ, իր սրտում
ապրող մի անձնավորութեան ձայն...

Սարխանն այդ ձայնը ճանաչում էր: Վա-
ղո՛ւց էր ճանաչում: Մի ընդհանուր հիշողու-
թյունների աշխարհը նետվեց նա, — իր ան-
ցյալը, իր բովանդակ կյանքը շտապ կերպով
գալիս անցնում էյին իր աչքի առջևից... հոր
մահից հետո հանքահորը մտավ. վերջը՝ «հան-
դատանալու» սրերին, հետզհետե մեծացավ:
Արդեն տասնչորս տարեկան էր դարձել:

Սակայն հանքահորը վերադարձավ նա նո-
րից. վերադարձավ պարտավորված, վորով-
հետե գյուղում նրա համար հարազատների
չմնացին այլևս: Կյանքն այնտեղ վերին աս-
տիճանի ծանր էր, որերը դանդաղընթաց:
Յերկու տարուց հետո՝ դարձյալ վերադարձավ
գյուղը: Արձակուրդի ժամանակ՝ նրա մի քանի
ընկերները ձերբկալվեցին: Մնացյալ բանվոր-
ների մեծ մասը հանքահորից հեռացավ:
1918 թվի վերջին ամիսներն էյին: Տաճկական
բանակը հայկական գյուղերը թալանելով,
ծծկեր յերեխաներին կոտորելով, մինչև Սար-
խաննց գյուղը հասավ: Սակայն այդ բանա-
կի գալուստը յերբեք չուրախացրեց Սարխա-

նին: Ճիշտն ասած՝ Սարխանն իրենց հարեան
քանդված գյուղերում ապրող մարդկանց հետ
իր հարաբերությունները չխզեց: Նա այդ
գյուղերի յերիտասարդներից շատերի հետ մո-
տիկից ծանոթ էր: Նրանցից վոմանց իր յեղ-
բորից ավելի յեր սիրում նա: Դրա համար էլ
կոտորածի որերին իր ամենամոտիկ ընկերոջը՝
Սանդրովին ըբրեց և իրենց տանը թագցրեց:
Այդ գյուղի կառավարիչ նշանակված տաճ-
կական չավուչ Միդհաթը, մի անգամ ձին քչե-
լով՝ Յոյչուենց տունը դալու պահին լուր ստա-
ցավ, վոր Սարխանն իրենց տանը մի հայ է
թագցրել: Ավղանական ավազակ լիներ կար-
ծես Միդհաթը: Հագին՝ լեզու չուխա, մեջ-
քին՝ մի մեծ ատրճանակ, տաճկական մաու-
զեր, իսկ գլխին — յերկնագույն յերիզով բաշ-
լիղ էր փաթաթել: Բեխ էլ ուներ: Ասում էյին,
վոր Յոյչուենց տունը գնալ-գալով նա յել էր
սովորել ըբշմիչ քսեղ բեխերին, վորպեսզի
նրանք տնկված մնան: Մխում էր: Ինչպես ի-
մացվեց իր պատմածից, բանալիում նրանց
ծխախոտ չէյին բաժանել յերբեք: Մինչև ան-
գամ չավուչը յերբեք չէր ժխտում այդ հան-
գամանքը: Մինչև Հայաստանի սահմաններին
մոտենալը նրանք չոր հաց էյին կրծել միայն
և ծառերի մանրացրած կեղևը ծխել: Իսկ յերբ
սկսեցին Հայաստանը թալանել, նույնիսկ մի
քանի գյուղ ավարի յենթարկելուց հետո առա-
ուտելիք և ծխախոտ ճարեցին: Գյուղում չա-
վուչն իր մոտ թուփուն չէր պահում այլևս:

Յուլջուլի նորաբաց խանութը հաճախողներից վճարանք չավուշի համար ընտիր պապիրոսներ էյին բերում:

Չավուշը ձին դեպի Սարխանենց տունը քշելու պահին հանկարծ հիշել էր Սարխանի այդ «զգվելի» վարձուները, և նրա աչքերից կրակի կաթճեր էյին ցայտել:

— Եֆենդի՛մ, ինչպե՞ս կարելի յե դյա-վուրին թագցնել:

Յուլջուն իր մեջքին դրած ձեռները բաց թողնելով՝ հնազանդ մարդու «վայելուշ» դրու-թյան մեջ էր մտել, և.

— Այո՛, քյաֆիր է, Եֆենդի՛մ, —ասել էր:

Սրանով չբավականանալով՝ Յուլջուն Սարխանի մասին նույնպես դանազան տեղե-կություններ էր հաղորդել չավուշին:

— Սարխանն հանգիստ տեղը նստող չուն-չանվորդիներից չե. մյուս անգամ հայկական մի դյուղ էր դնացել և ձեր մեծապատվության մասին անվայել բաներ խոսել:

Չավուշը ձին մտրակելով՝ Սարխանենց տան կողմն էր ուղղվել:

Սարխանենց դռանը դորչավուն, փոքրիկ և կարճ պոչով մի շուն էր կապած: Իրենց բո-լոր հարևաններին ճանաչում էր այդ շունը: Միայն չավուշին չգիտեր: Մի անգամ քիչ մնաց նրան ձիուց ցած բերեր շունը և մի լավ կծեր, յերբ հարևան կանանցից մինը վրա հա-սավ շտապ և ձեռքի հաստ փայտով խեղճի կրծոսկրերը ջարդեց: Փայտի հարվածներն ու-

տելուց հետո միայն մի կողմ քաշվեց շունը: Կրկին անգամ, յերբ չավուշը նույն տեղից անց էր կենում, շունը գլուխը բարձրացրեց, նա-պաստակի նման ականջները տնկելով՝ ձիու մոտ հասավ և բարձր ձայնով հաջեց. այս ու-այն կողմ ցատկեց: Հետո իր ուժերը հավաքե-լով՝ ձիու թավ բաշերով վզի վրա հարձակվեց: Չավուշն ատրճանակը կրակելով՝ շանը գետնի-վրեց: Այդ միջոցին Սարխանը տնից դուրս յե-կավ: Սկզբում վոչ մի բանից տեղեկություն չուներ նա: Շանն այդ դրության մեջ տեսնե-լուց հետո բղավեց.

— Ե՛յ ոսմանցի շան լակոտ, շանն ինչո՞ւ սպանեցիր:

Մեկ բոպեյից հետո, թևերը կապած Սանդրովին տնից դուրս հանեցին: Գեղնել էր վոչինչ չխոսեց:

Չավուշն հրամայեց իր շրջապատի մարդ-կանց, գյուղի ամբողջ հասարակությանը, շտապ հավաքվել:

— Գյուղի կենտրոնում, բլրակի վրա թոյ հավաքվեն շուտով:

Չանցած մի քանի բոպե, գյուղի բոլոր տղամարդիկ, համաձայն չավուշ-մեծապատ-վության հրամանի, մատնանշված բլրակի վրա էյին հավաքվել: Այժմ Ոսմանյան մեծ կայ-սրության «հերոս» վորդին իր շնորհքը ցույց էր տալու. վորպես ճարտար ճառախոս՝ իս-կույն մի ճառ էլ արտասանեց նա.

— Փառապանծ հայրենիքի մեծանուն
թյուրք զալակնե՛ր:

Նման դյավուրների դեմ կռուելիս՝ ցարդ
նվազ աշխուժություն ցույց չեմ տվել յես:
Հայաստանում որեկան առնվազն 7—8 դյավու-
րի յեմ սպանել: Այժմ ձեր աչքերի առաջ՝ այս
ավանակի պահած հային շան սատակ եմ անե-
լու:

Չայուշը հայրենիքի պաշտպանության,
թրքության պաշտպանության «փառքը» ուրի-
շի հեռ բաժանել չցանկանալով՝ ստորճանակը
քաշեց, և.

— Հեռո՛ւ կացեք, — հրամայեց:

Սանդրովը վախկոտ չեր: Բայց նկատելով,
վոր մարդկային կերպարանքի տակ թաղնված
վայրենին իրեն պետք է սպանի շուտով՝ մագե-
րը բիզ-բիզ կանգնեցին: Հանկարծ.

— Յեղբայրնե՛ր, — բղավեց նա, — սրանք
ձեր թշնամիներն են նույնպես: Թող...

Թրա՛խկ...

Սանդրովը ծնկների վրա գետին դլորվեց:
Նրա հոնքերի մեջտեղից յերկու կաթիլ արյուն
ծորալով՝ աջ աչքը ծածկեցին: Իսկ յետևի ծա-
սին՝ արյունոտ մի կտոր միա եր կպել:

Վիմանք ուրախացան. ուրիշներ յերեսնե-
րը չայուշից չըջելով՝ իրենց աչքից թափած
արցունքի խոշոր կաթիլները գաղտնի սրբե-
ցին:

Յերբ Սարխանին հրապարակ բերին՝ չա-
վուշը գյուղի յաստուչներին հրամայեց.

— Հիսո՛ւն հարված...

Այդ բուպեյին հարևան տանիքների վրա
չարված և արցունքն աչքերին այդ տեսարանը
դիտող գեղջկուհիներից մինը ճչաց հանկարծ.

— Վա՛յ, Սարխանին սպանեցի՛ն:

Սարխանն այդ աղջկան գիտեր: Գուցի
դիչերվա այս ժամին, Սրամ գետի խեղդված
հոսանքը կտրատելով յեկող խզված ձայնը
նույն ձայնն եր. «Սարխա՛ն, Սարխա՛ն...»:

Չայնն ավելի քան մոտեցավ: Այժմ Սար-
խանը Սրամ գետի ափին դռնված բարձր ժայ-
ռի վրա բարձրանալով՝ կանչեց ուժգին.

— Մահիրե՛, դո՞ւ յես:

Մոտեցան: Մահիրեն գետի մյուս ափին
կանգնած, խզված ձայնով՝ շտապում եր ան-
հրաժեշտ մի լուր հաղորդել Սարխանին: Սար-
խանն իր ուժերը հավաքեց, ինքնիրեն գետի
ալիքներին հանձնեց արագ: Հինգ բուպեյից հե-
տո՝ իրար գտան նրանք:

Սարխանը վոտից մինչև դլուխը թրջվել
եր: Յեղանակը ցուրտ եր և մթամած: Մահի-
րեյի ձայնից իսկույն հասկացավ, վոր վախե-
ցեց և նա ճամբին: Մահիրեն ձիով եր յեկել:

— Եսպես գիչերվա կիսին, դո՞ւ ուր,
եստե՛ղ ուր:

— Յեթե յես չգայի՝ ձեր գործը փչանա-
լու յեր:

— Ի՞նչ է պատահել, — հարցրեց Սարխա-

նը և ձիու վզին փարելով՝ Մահիրեյին խիստ
մոտիկ կանգնեց:

— Ինչպե՞ս թե ինչ ե պատահել, գյուղը
քար ու քանդ են անում:

— Ո՞վ ե քարուքանդ անում:

— Յուլչուի տղաները...

Սարխանի լեզուն բերնում չորացավ: Յուլ-
չուի տղաները լայվ մտադրություններով
գյուղ չէյին վերադարձել անչուշտ: Հիմա նա
չատ լայվ եր հասկանում այդ:

— Ախր դրանք ի՞նչ են անում, — մի ան-
գամ էլ հարցրեց Սարխանը:

— Ամեն պարագային արթուն կացեք... —
մի տեսակ սրտանց ավելացրեց Մահիրեն:

— Ասում են, վոր Շամսին վերելի գյու-
ղերի աղգարնակչությանը բերել ե, վորպեսզի
գյուղը քար ու քանդ անի:

— Ուրեմն եղպե՛ս...

Սարխանը մտքերով տարվեց կրկին: Սա-
կայն յերկար չմտածեց:

— Իջիր ձիուց, յես շատ եմ մրսում. նո-
րից ջուր մտնել չեմ կարող:

Սարխանը Մահիրեյին իրենց կողքի քարի
վրա նստեցրեց, իսկ ինքը հեռացավ մի քիչ:
Մթության Ծոցում հանվելով՝ շորերը քամեց:
Հետո կրկին հագավ: Ի վերջո ձին հեծնելով՝
դեպի քնած պարտիզանները քչեց: Համնելիս
մաուզերն իրար հետևից յերեք անգամ կրակեց:
Խուրն էլ վոտքի կանգնեցին:

— Դեպի գյո՛ւղ, դեպի գյո՛ւղ ես բուպե-
յիս...

Հողնած պահակը դեռ չեր սթափվել, դեռ
կիսամբայի դրության մեջ եր գտնվում:
Արձակված գնդակները նրան ել ցնցեցին: Սար-
խանը կանչում եր.

— Դեպի գյո՛ւղ, դեպի գյո՛ւղ...

—————

Յ Ե Ր Կ Ո Ւ Մ Ա Ն

Գիշերվա ժամի 1-ն եր:

Շամսին ձին արագ քշելով՝ դարբին Մուսայի տունը հասավ: Նրա հետ ուրիշ մարդիկ էլ կային: Մուսան տանն եր: Սակայն այս դեպքերից վոչ մի տեղեկություն չուներ:

Շամսիի հետ միասին վերևի գյուղից յեկած ձիավորները գուղի տներն ելին տեղավորվել:

Այդ որը կարմիր բանակից գյուղը յեկած էր ուժերն ամբողջապես կռվի ճակատն ուղևորվելու պատճառով՝ գյուղում, հեղկոմի յերկու-յերեք անգամներից բացի, զենք վերցնող չեր մնացել: Շամսին այս առիթից ոգտվել էր ուզում առանց ուշանալու: Մուսայի տան առաջը կանգնելով՝ ընկերներին նա առաջարկեց լուռ մնալ բոլորովին: Տան աջ կողմը կապված մոխրագույն շունը հաջում, իրեն աջ ու ձախ եր գցում:

Շան ձայնն տոնելիս Մուսան դուրս յեկավ: Բայց ձիավորներին տեսնելուն պես կանգնած տեղը շուռ յեկավ նա: Հագին մոխրագույն շինելն եր միայն, վոտները բորիկ ելին:

— Ո՞ւմ ե քուզում, — ասաց քնաթաթախ աչքերը արորելով:

Թեև շուսինը գյուղը վողողել էր իր լույսով, բայց այդ մարդկանցից և վոչ մեկին չճանաչեց Մուսան, մինչև անգամ Շամսիի կերպարանքն անձանոթ թվաց նրան:

— Քե՛զ... — բղավեց Շամսին:

Այս խոսքը մեծ հրճվանքով արտասանեց նա և ձին ավելի մոտ քշելով՝ բավականին կուպիտ ձայնով բղավեց:

— Ընկի՛ր առաջս, շանվորդի... —

Դարբին Մուսան մոմենտի չըջությունն ըմբռնելով՝ իսկույն տունը վազեց: Տանը լույս չկար: Յերեսխաները խորը քնով տարվել ելին: Նա հրացանը վերցրեց, փամփշտակալը մեջքին կապեց: Դռանը մոտենալու ըոպեյին՝ նույն ձայնը լսեց դարձյալ:

— Ընկի՛ր առաջս, շանվորդի... —

Գյուղի մեջտեղի բլրակից մի մարդու ձայն լսվեց հանկարծ:

— Ա՛յ ժողովուրդ, մի՛ք թողնի, գալի՛ս են... հե՛յ, — աղաղակում էր:

Սարխանի խումբը գյուղն էր հասել արդեն: Կայծակի արագությամբ հասել ելին նրանք:

Սրանից քիչ առաջ խաղաղ քնով հանգըստացող գյուղում աղմուկ, աղաղակ էր բարձրացել, կանանց լացի ձայնը չորս կողմը պատել էր:

Յերբ խումբը բլրին մոտեցավ՝ Սարխանը — Կանգ-նի՛ր, — հրամանը տվեց:

Շամսիի խումբը յերկու մասի յեր բաժանված: Սուաջին մասը հենց այսօր Գանձակից հասած Միզհաթ չավուչի հրամանատարության ներքո գյուղի դպրոցն եր չըջապատել, իսկ յերկրորդ մասը՝ Շամսիին մեջտեղն առած՝ խրամատն եր մտել:

Իարբին Սուսան տան՝ յետևի լուսամուտից դուրս թռչելով՝ անընդհատ գնդակ եր արձակում:

Բլրակին կանգնած անձնավորությունը կրկին կանչում եր.

— Մի՛ք թողնի, գալի՛ս են. հե՛յ...

Այնքան դառն ու աղերսական եր այդ ձայնը, վոր թվում եր, թե հորի խորքերից ե գալիս:

Շամսիի կանգնեցրած պահակի ձայնն եր այդ:

Սարխանի հետ միասին հասնող խմբի մուտքը տեսնելով՝ ավելի բարձր սկսեց կանչել այս անգամ նա.

— Գալի՛ս են, հե՛յ...

Սարխանն այս ձայնը չսեղիս՝ տեղն ու տեղը կանգ առավ: Ո՞վ ե լինելու արդյոք, հարցնելով ինքնիրեն՝ մտածեց, բայց, անմիջապես «յերևի Շամսիի կողմնակիցն ե» պատասխանեց ինքնիրեն: Շուտով Շիրալին ել յեկավ և Սարխանին դտավ: Սարխանն իրենց բռնելիք

դիրքերի մասին նրանից վորոչ բան իմանալուց հետո.

— Շիրալի, դու դպրոցը պետք ե պաշտպանես, իսկ յես՝ Հեղկոմը... — առաջարկելով՝ յերեսը դեպի խումբը դարձրեց:

— Տասը մարդ Շիրալու հետ թող գնա... չո՛ւտ, մի՛ք սպասի...:

Տասը մարդ անջատելով՝ գյուղի դպրոցը պաշտպանելու համար շտապ ներքև ուղարկեց նա: Հետո բլրի վրա յերկու պահակ նշանակելով՝ արագ քայլերով առաջ անցավ:

Բայց հեղկոմի շենքի կողմից հասնող հրազենի ձայներն առնելիս՝ պարտիզաններին առաջ շարժվելու հրամանը տվեց:

— Մահիրե, հեռու տեղ մի՛ գնա դու, ես տեղ արի, թագնավիր, — ասելով՝ հեղկոմի շենքին մոտիկ մի հողաչեն տան կտուրը բարձրացավ ինքը:

— Դեռ վո՛չ մի գնդակ չարձակել, հասկացա՞ք:

Այս աղաբարությունից հետո՝ պառկեց: Մահիրեն նրա կողքին եր նույնպես: Ամպերի տակից իր մի թևը ցույց տվող լուսնի լույսի տակ յերկարած Սարխանը գյուղի վրա ուշադիր հայացքներ եր պտտացնում: Հրացանի ձայները մոտիկից ելին գալիս: Հրացանների արձակած բոցերի մեջ՝ բարեկամ ու թշնամին իրարից դատելը դժվար եր: Գնդակներն իրենց կողմը չեյին գալիս: Նա այդ բանն եր միայն

զգուժ: Սարխանին մոտիկ պարտիզաններին
մինը շատ կամաց ասաց:

— Ասես Մուսայի տունը պաշարեցին...
տեսնո՞ւմ եք, մի քանի հոգի տան կտրին են
յերկարել:

Բոլորն ել այդ կողմը նայեցին: Բայց այդ
մարդկանց ով լինելը դժվար եր վորոշել: Սար-
խանը տան կտուրից ցած իջավ, պատվիրեց
ընկերներին, վոր զգուշ, թագուն մի առ մի
իրեն հետևեն, իսկ ինքն առաջ անցնելով՝
խումբը կրակի կողմն առաջնորդեց:

Սարխանն իր ձեռքի լիք հրացանը պատ-
րաստ եր պահում: Յերբ խումբը լուսնի լույսի
տակ նշմարված մարդկանց մոտեցավ՝ հան-
կարծ Շամսիի խումբը համազարկ տվեց:
Սարխանը ձեռքի զենքը գետին գցեց և հազիվ
մի քայլ իրենից հեռու՝ իրենց հետ բերած
ձեռքի գնդացիքը վերցրեց:

— Յրվե՛լ, գետի՛ն պառկե՛լ, — բղավեց:

Քայլ առ քայլ առաջացող պարտիզանները
յերեսն ի վեր գետին պառկեցին:

Լուսինն ամպերի մեջ պահվտում եր, չորս
բոլորը սևանում: Իսկ գյուղը, վոր այնքան ել
մեծ չեր, մի սևաթույր վարագույրով եր
ծրարվում...

Ներքևի կողմից բարձրացող յացի ձայնե-
րը խմբի առաջ կտրող թշնամու զենքի ձայնե-
րին եյին խառնվում: Գնդակները վզալով և
գյուղական տների պատերին կպչելով՝ քարե-
րը կտոր-կտոր ջարդում, գետնին պառկած

մարդկանց կողքերից, զլիսի վրայից վրդ-վրդ
անցնում եյին:

Սարխանը դրուժյան բովանդակ ծանրու-
թյունն զգալով՝ գնդացրի փամփուշտների
ժապավենը կապեց և յերեք-չորս քայլ առաջ
ընկած կաղնու մեծ կոճղի յետևն յերկարեց:
Առջևից յեկած գնդակները չեյին դադարում:
Թշնամին՝ խմբին եր մոտեցել: Բայց սրանցից
և վոչ մեկին հնարավոր չեր տեսնել: Սար-
խանն անձամբ գնդացրից կրակ շաղ տալ սկսե-
լուց առաջ՝ ընկերներին՝

— Կրա՛կ, — հրամանը տվեց:

Թշնամին Դարբին Մուսային թողնելով՝
հարձակման անցած պարտիզաններին դիմա-
դրավելու յեր գալիս: Նրանք խմբին ել ավելի
եյին մոտենում հիմա:

Սարխանը գնդացրի ժապավենն ուղղե-
լով՝ ուժեղ կրակ բացեց: Հետզհետե ավելի յեր
մթնում. յերկինքն ու գետինն իրար զրկում ե-
յին կարծես: Զենքերի առաջացրած շափ-
շառաչը, գնդացրի կրակներն ու աղմուկներն
ասես վողջ գյուղն իրենց ափի մեջ առել՝ հա-
լեցնում եյին: Մանուկների հեկեկանքները,
կանանց դեպի վեր բարձրացող լացի ձայները՝
մահվան հանդեպ ծունկ-ծնկի յեկած հերոս-
ների ահագին կանչերին եյին խառնվում:

Սարխանը մի բուռնով կրակը դադարեց-
րեց:

Նա վերավորվել եր... կողքի գրպանից

սպիտակ լաթի մի կտոր հանելով՝ վերքը փաթաթեց և դարձյալ շարունակեց կրակ բանալ: Քիչ հետո Սարխանի գնդացրից արձակված շնորհակները՝ պակասեցին աստիճանաբար, չանցած մի քանի րոպե, բոլորովին դադարեցին: Այս անգամ ծանր վերք էր ստացել նա: Թչնամին՝ խմբի բոլոր անդամներին վորոշելու աստիճան առաջացել էր:

— Խփի՛ր, խփի՛ր...

Սարխանը սկսեց նորից կրակել գնդացրից:

Նրա վերքից արյունն աղբյուրի պես հոսում էր, առատանում: Ընկալ ծնկների վրա: Հետո ամբողջ ուժերը հավաքելով՝ կանչեց.

— Գրո՛հ...

Խմբից սկանջ խլացնող մի աղմուկ բարձրացավ:

— Գրո՛հ...— արձագանգեցին բոլորը:

Սրերը, դաշույները դուրս յեկան պայաններից: Սարխանն առաջ էր գնում կրկին: Բայց որորվելով, կաղն ի կաղ այս անգամ...

— Խփի՛ր, խփի՛ր...

Հրամայողը Շամսին էր հիմա...

Շրա՛խկ...

Սարխանն իր ձեռքի մերկ սուրն ուղիղ գեպի իրեն առաջացող մի մարդու ճակատին խփեց: Մարդը գետին գլորվեց: Շամսին էր դա: Սարխանն ուղեց յետ դառնալ, իր յետև թողած գնդացիքը գտնել. սակայն ծնկները

ծալվում էին. շունչ առնելու համար մի վայրկյան տեղն ու տեղը կանգ առավ: Իսկ այն խումբը, վորին առաջնորդել էր ինքը, այժմ իր յետևն էր թողնում իրեն:

Գիմացի կողմից առաջացողները նահանջում էին:

Սարխանն զգաց, վոր բազմաթիվ վերքեր է ստացել:

— Ո՛ր...— ասելով՝ ծնկների վրա բարձրացավ:

Պատառոտուն, վիրավոր մարմնով առաջ սողալով՝ մի անգամ էլ թչնամու վրա հարձակվել ուղեց: Սակայն զգաց, վոր անհնարին է այդ. թևի ծայրով արցունքը սրբեց, և կըրկին գեպի յետ սողաց: Թաց խոտերի մեջ թողած իր գնդացրին հանդիպելիս ուրախացավ:

Այժմ Սարխանն աշխատում էր վերջին ուժերը հավաքել, մեջքն ուղղել: Նրա ձեռքերն ու վոտներն արյունով ներկվեցին: Վեր կենալու ցանկության րոպեյին՝ ծնկները ծայվեցին նորից, և յերեսն ի վայր ընկավ...

Հիմա, իր խորհրդային հայրենիքի համար զոհվող հեղափոխական մի զինվորի վերջին հեծկլտանքներն էին լսվում միայն:

Մեծ ճիգերով՝ գնդացրին փաթաթվեց, ցանկանալու րոպեյին՝ ծանր շունչ քաշեց նա, հետո... լոց:

Սարխանի՝ գետին ընկած գլուխն իր ծնկնե-

բին առած՝ մի աղջկա դառն հեկեկանքները լըս-
վեցին հանկարծ :

Մահիրե՛ն եր դա :

Ֆաբուցրել վեղած թշնամու խումբը
բազմաթիվ գիտկներ եր թողեց : Սարխանը
հաղթանակ տարած բանակի անվեհեր հրա-
մանատարի նման հանդիսու քնով ննջում եր :
Շիրալին նրա գլխավերևը կանգնած՝ լալիս ,
թաց աչքերով՝ մեռած ընկերոջ արյունոտ յե-
րեսին եր նայում : Հետո՝ ինքնիրեն՝ «յերեսի
նման յես ել եմ լալիս» ասելով՝ արցունքը սըր-
բեց . և հավաքված գյուղացիների խումբը
ձեղքելով՝ կովի ճակատը մեկնեց :


... Կես ժամից հետո գյուղից յերկու
խումբ ճանապարհ ընկավ . առաջին խումբը
դեպի գերեզմանատուն , իսկ յերկրորդն ու-
ղից կովի ճակատն եր մեկնում : Շիրալին յերկ-
րորդ խմբի առջևից եր քայլում : Նա իր աչ-
քերն ու յերեսը սրբելով՝ դեպի Թիֆլիս յեր-
կարող խճուղին բռնել—արշավում եր ձիով :
Հիմա ամեն ինչ նոր ե սկսվում :

ՎԵՐՁ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿ-ՍՈՐԱ

ԳԻՆԸ 1 Ռ. 25 ԿՈՊ.



**МЕХДИ
РАЗЛИВ
ГИЗ ССР Армении**

ՀՀ Ազգային գրադարան



NL0381804

73 783

